Դեղագիտական, Գրական, Հասարակական, Քննադատական, Քաղաքագիտական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

Քաոնեչորսերորդ տարի **ՆՈՅԵՄԲԵՐ** № 11 1913—XXIV

Հասցէն՝ Тифлис, Редакція „ТАРАЗ“. Tiflis (Caucase), Direction „TARAZ“ Голов. пр., 41

Խմբագրութիւնը յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չընդունելիքը (երեք թերից պակաս) չէ վերադարձնում։

Անձնական տեսակցութիւն *խմբագրի հետ* **ԵՐԵՔՇԱԲԹԻ և ՈՒՐԲԱԹ** *առ. ժ. 11—12։*

Բաժանորդագրութիւն *ընդունւում է ամեն լեզուով։* **Տարազի** *յայտարարական տողը առաջին երես 40 կ., վերջին 25 կ. մանրատառ (պրոխ)։ Արտասահմանից կրկնակի։ Շատ անգամ կրկնուողներն առանձին համաձայնութեամբ։*

Աղբիւր-Տարազ *ամսական 33 կ.*

Տարազի նիւթակ. №-ը (VI-րդ հրատ.) 1 ք.

Խմբագրութիւն—Թիֆլիս, *Գօլովինսկի պրօսպեկտ, տ. № 41, բաց է ամեն օր (բացի տօն և կիրակի օրերից, առ. 10½ ժ. մինչև 2-ը կէսօրից յետոյ։*

ՏԱՐԱԶԻ XXV-ամեակի առիթով դպրոցական աշակերտների համար ԱՂԲԻՒՐԻ 1914 թ. բաժանորդագրիր ՄԻՆ ռուբլի։

ԲԱՑԻԱԾ Է ԱՌԱՋԻԿԱՅ 1914 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՂԲԻՒՐԸ իր 32-ՐԴ

XXXII 1914 XXXII

ԳԱՏԿԵՐԱԶԱՐԴԻ ԱՄՍԱԳԻՐ

*Տարեշրջանին՝ 1914 թ. նոյնպէս կը հոսի հայ մատաղ անդաստանում զբաղի ու պայծառ՝ իր կարկաչով մեր վարդ ու մանուշակ, շուշան ու յասմիկ պարտէզները ուսուցանելով իր նման յստակ ու անվհատ անդադրում սուրբ աշխատանքի՝ չընկնելով ոչ մի խոչնդոտ առաջ՝ իր նպատակը իրականացնելու, այն է՝ տածել բարի նախանձ դէպի վեհն ու պզինւը եւ խորհել չարից, տգեղից ու վատից։ Լինել անվեհեր, հաւատալ ճշմարտութեան յաղթանակին, որին հասնելու միակ ճշմարիտ ղէնքերը **գիտութիւնն ու արուեստը** են։*

1914 թ. թիակոխում է իր յոբելեանական **25**-*ՐԴ տարին։* ***ՏԱՐԱԶԸ*** *արտացոլում է հայկական և համաշխարհային Գրական, Քաղաքակագիտական, Քննադատական, Հասարակական, Թատրոնական, Երաժշտական, Գիտական կեանքը։* ***ՏԱՐԱԶԸ*** *հրատարակւում է այնքան շքեղ և փարթամ,* ***ՏԱՐԱԶԸ*** *այնքան հմայիչ է ու հրապուրիչ իր ներքին ու արտաքին բովանդակութեամբ, որ իր՝* ***ՏԱՐԱԶԻ*** *իւրաքանչիւր հրատարակ լոյս տեսած № վաճառուել է հասար մինչև* 3 *ք.։ Այս անցնող 1913 թ.* ***ԱՂԲԻՒՐ ՏԱՐԱԶԸ*** *տւել են* **25 ՊՐԻՄԻՈՒ**, *որոնցից միայն 6-ը արժին 10 ք.։ Իսկ բաժանորդագինը* ***ԱՂԲԻՒՐ ՏԱՐԱԶԻ*** *իր 25 պրէմիաներով եղել է ընդամէնը 10 ք. և նոյնը դպրոցական աշակերտների հասցէով 5 ք.։ Արդ հարցնում ենք՝ կարելի բան էր 5 ք. բաժանորդագնով տալ այնպիսի №№, որ մենք տւինք այս անցնող 1913 թ. մեր բաժանորդներին և հետն էլ դեռ 25 պրէմիա։ Սրանցից 24-ը արդէն ստացել են բաժանորդները, իսկ 25-րդը կըստանան տարւայ վերջին։ Բայց այդ 25-րդը այնքան էլ հաճելի չը պիտի լինի հայերի համար, որովհետև այնտեղ ՅՕՍԱՓ ու ԳՈՐԾ է միմեանց կողքին դրւում։ Հայի խօսքը, իսկ մեր գործը։*

Առաջիկայ 1914 թ. ***ՏԱՐԱԶԸ*** *լոյս է տեսնելու աւելի ևս ստւար ծաւալով ու աւելի ևս հմայիչ։*

ԱՐԻԵՍՏ՝ *լինի նա արտայայտած բանաստեղծի վառ շողթունքներով, հրաշագործ նկարչի վրձինով, թէ սիրտ արուեստագէտի վիպագրի գրչով* ***ՏԱՐԱԶՈՒՄ*** *առաջին տեղն ունի։*

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ՝ *մեր առօրեայ, հասարակական կեանքը՝ լինի նա արտայայտած վէպով, պատմածով, ֆելիետօնով, թէ կատակով՝* ***ՏԱՐԱԶԻ*** *գրական-ժամանակագրական մասը պիտի կազմէ։*

ՊԱՏԿԵՐՆԵՐ, ՆԿԱՐՆԵՐ, ՏԵՍԱՐԱՆՆԵՐ՝ *թէ արդի և թէ անցած գնացած, ժանաւանդ մեր կեանքի,* ***ՏԱՐԱԶԻ*** *մէջ բռնում են մեծ տեղ։*

ՅՕԲԵԼԵԱՐ ՏԱՐԱԶԸ *իր այս* **25**-*ՐԴ տարեշրջանին տալու է իր բաժանորդներին նւէր-պրեմիա մեծաթիւ վոյժ մի հոյակապ ԴՈՐԾ պերճ զարդ դահլիճի, իր բոլոր աշխատակիցների պատկերներով։ Բացի այդ, բաժանորդները կը տան ան մի ԺԱՄԱՆԱԿ* ***ՏԱՐԱԶ****։ Յունւարի №-ի հետ Գեղափետիկ՝* ***ԱԼՄԱՆԱԽ ՕՐԱՑՈՅՑ*** *1914 թ., շքեղ հրատարակութիւն։* ***ԱՂԲԻՒՐՆ*** *ու* ***ՏԱՐԱԶԸ*** *1914 թ. կը տան մի շարք յաւելուածներ, որ կը հրատարակւեն հէնց* ***ԱՂԲԻՒՐԻՆ*** *ու* ***ՏԱՐԱԶԻՆ*** *կից։*

25-ՐԴ ՏԱՐԻ

միակ հայկական իլիւստրասիօնը

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՂԲԻՒՐԻ տարեկան բաժանորդագինը	1 *ք.,*
ՏԱՐԱԶԻ » »	4 *ք.,*
ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ միասին	5 *ք.,*

Դպրոցական աշակերտները չեն ստանում ոչ յաւելուածներ եւ ոչ էլ պրէմիաներ։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան բաժանորդագինը	3 *ք.,*
ՏԱՐԱԶԻ » »	6 *ք.,*
ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ պրէմիաներով և յաւելուածներով տարին	10 *ք.,*
ԱՂԲԻՒՐԻ տարեկան բաժանորդագինը արտասահման	5 *ք.,*
ՏԱՐԱԶԻ » » »	10 *ք.,*
ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ պրէմիաներով և յաւելուածներով	18 *ք.,*
	կամ 50 ֆր.,

Ապառիկ եւ մաս-մաս բաժանորդագրութիւն ոչոմից եւ ոչ մի պայմանով չէ ընդունւում։

Դպրոցները, գրադարանները և հասարակական հաստատութիւնները դպրոցական աշակերտի հասցէով կամ նրանց ղեկուցած բաժանորդագնով չեն կարող ստանալ ***ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ***

Հասցէն՝ Тифлис. Редакція жур. „**Агбюр-Тараз**“. Tiflis (Caucase) Diréction „**Agbür-Taraz**“

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ *տարեկան 10 ք. վճարող բաժանորդը Գրական-Գեղագիտական Սալօնը ազատ մուտք ունի և կարող է ամեն օր առ. 11 ժամից մինչև գիշերւայ 8-ը օգտւել Սալօնի ընթերցարանից։*

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ՆՈՐԱԳՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամբագրութեանս մէջ ստացել են՝

ԳՈՒՐԳԷՆ ԷԴԻԼԵԱՆ՝ «Դասաւանդման ձեւերը» 134 եր., գինը 50 կ.։ Հեղինակը, թէև մանկավարժական իր բարձրագոյն ուսումը ստացել է Գերմանիայում, աշակերտելով Հերբարտ-Ծիլէրեան ուղղութեամբ պրօֆեսօրների, այնուամենայնիւ նա թեքւել է նորագոյն Ֆրանկավարժութեան, մերժում է «ձեւական հինգ աստիճանները», անելով որոշ ցուցմունքներ, որ եզրակացութիւններ են իր գիտական փորձերի և մանկավարժական աշխատանքի։ Աշխատութիւնը լոյս է տեսնելու մի քանի գրքերով, առայժմ այս I մասն է։

МАЛАХІЯ ОРМАНІАН „Армянская Церковь“ (Ея исторія, ученіе, управленіе, внутренній строй, литургія, литература ея настоящая). Թարգմ. ֆրանս. Б. Рунт., հրատ. Ալր. Բուդաղեանի, 217 եր. գինը 1 ր. 50 կ.։ Մեր ընթերցողները արդէն ծանօթ են սրբազան Օրմանեանի այս փայլուն աշխատութեան հետ Տարազում տպած գրախօսութիւնից, որ ֆրանսերէն բնագրի լոյս տեսնելուց յետոյ հրատարակեցինք։ Այժմ մեզ ծուում է առաջարկել ֆրանսերէն չը կարդացողներին ձեռք բերել ռուսական այս թարգմանութիւնը, որ կատարւած է լաւամբով ու հրատարակութիւնն էլ վայելուչ։

Գ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆ՝ «Լսքիզներ», 186 եր գինը 50 կ.։ Սիրուն 14 պատմւածքներ, նկարագրութիւններ են, ուր շնորհալի գեղապէտը իր քնքոյշ գրիչը կարծէք թաթախել է իր պալիտրի գոյնզգոյն ներկերում և գծագրել կենդանի ու գեարթ։

Թ. ԳԱՒՌԻԿ՝ «Մասիս երկրին քէն բարձր», բանաստեղծը իր երկին այնպիսի մի վերնագիր է դրել, որ հարկ չը կայ այլևս ընդգծելու նրա խանդաւառ գրիչը։ Աշխատութիւնը նւիրւած է հայ տառին և ձօն ու փառաբանութիւն է՝

«Ողջոյն քեզ ղէմոյ թագուհի հայ տառ,
Ող լոյսով կուգաս, հուրով բոցավառ,
Դուն չէռ որ տուիր արեւին իսկ լոյս,
Դու տառ, չէռ միայն թշուառութեան լոյս»։

Левон Григорянц — «Чайка» 28 բանաստեղծութիւններ Լեւոն Գրիգորեանցի, որ հայերէն լեզուից թարգմանել են՝ И. Гриневская, Ап. Коринфскій, В. Уманов Каплуновскій, М. Шагэ (М. Н. Шап-Гирей.) հեղինակի պատկերով, հրատ. բժշ. Վ. Խաչատրեանցի, 30 եր., գինը 30 կ.։ Մենք միայն ուրախութիւն կարող ենք յայտնել, որ մայրաքաղաքներում մեր բանաստեղծները սկսում են գրաւել և ռուս ընթերցողներին ու նրանց երկերը սկսում են պատւաւոր տեղ գրաւել և ռուս գրականութեան մէջ։

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ (Գէորգ Ղէ) «Աշխարհաշունչ» (Մատեան-հաւաքածու նիւթապաշտ) 288 եր., գինը 80 կ.։ Հեղինակը գողտրիկ նկարում է առօրեայ կեանքից իրական պատկերներ, թէև անպաճոյճ, բայց հաճութեամբ կարդացւող ու մէկը մեւսից աւելի հետաքրքրական։

Նոր ուղի, գրական ալմանախ, խմբ. Աշոտ Սիմէօնեան, 28 եր., գինը 5 կ.։ Սկսնակ պատանիներ Ալէքսան-դրապօլում օգտակար ժամանց են հիմնել։ Յանկանում ենք աջողութիւն. բայց ի՞նչու Գրական ալմանախ անունով են մկրտել իրանց Նոր Ուղին ժրաջան պատանիները։ Ի՞նչն են համարում գրական ալմանախ։

ԱՐՇԱԿ Ք. ՄԻՆԱՍԵԱՆՑ՝ «Գործք առաքելոց» 120 եր. և քարտէզ (Պօղոսի առաքել. ճանապարհորդութիւնը) գինը 30 կ.։ Ներսիսեան և Յովհաննեան դպրոցների կրօնուսոյց Տէր-Արշակ ք. Մինասեան իր այս ձեռնարկը կազմել է շատ դիւրըմբռնելի, որև աջող ընթերցանութեան գիրք է այն հայ քա՛ոտնեաների համար, որոնք ոչ ժամանակին իրանց դպրոցում են ըմբռնել քրիստոնէական առաջին առաքեալների գործերի իմաստը և ոչ էլ այժմ եկեղեցում գրաբար ընթերցւածքից են բան հասկանում։ Գիրքը տպագրւած է Գէորգ V կաթուղիկոսի հրամանաւ և իբրև դասագիրք ընդունւած մեր բոլոր ուսումնարանները։

Վ. ՓՓԱՆՋԵԱՆ՝ «Գիւղից պատկերներ» 278 եր., գինը 50 կ., Հրատ. կ. Հ. Բ. Ը. Ա. Պօղոսեանի Գրական ֆօնդի արդիւնքով։ Ուրիշ պատմւածքներ են, գիւղական կեանքից, որ տաղանդաւոր մատենագիրը իրան յատուկ գեղ շարիխներով տալիս է։ Այստեղ են Քեօխեան ու Ստարշինան, Սերմնացանն ու Հողի աշխատաւորը և այլն։

ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ, ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ՝ «Երաժշտական այբբենարան», դասագիրք ձայնագրութեան, I մաս (դիատոնիզմ), արժանացած Պետերբուրգի կայսեր. Կօնսերվատօրիայի գեղագիտ. խորհրդի դրւատման։ 32 եր. գինը 35 կ.։ Այս անհրաժեշտ ձեռնարկի լոյս տեսնելը սիրով ողջունում ենք և ցանկանում իրաքանչիւր մանուկ ձեռք բերի ու իր անհրաժեշտ դասագիրքը համարէ։

А. Б. Евангулов — „Маршруты, экскурсій по Кавказу“ I выпуск, маршруты однодневных экскурсій. 40 եր. և քարտէզ, գինը 50 կ.։ 24պատկերներով զարդարւած այս ուղեցոյցը անշուշտ օգտակար ծառայութիւն կանի էքսկուրսանտներին, մանաւանդ երբ լոյս տեսնեն և բոլոր պրակները։

ԼԵՒՈՆ ՔԱԼԱՆԹԱՐ՝ «Ծաղիր երազ», պիէս 4 գործող., 75 եր., գինը 50 կ., Անցքը կատարւում է մեր օրերում, հազիւ երկու շաբթւայ ընթացքում։ Անցեալ սեզոնին հայ լեհի վրայ ներկայացրին այս պիէսը, որ շատ թիր և դէմ կարծիքներ յարուցեց։ Յամենայն դէպս երիտասարդ դրամատուրգը լուսամիտ վախճան է տւել սիրող ամուսիններից մէկի վայրկենական թշւառութեան, թէ ինքնամոռացման։ Եւ տխուր, շատ տխուր կը լինէր, եթէ Աբրահամը իր իսկական սէրը փոխարինէր խանդով ու ոճիր գործէր, կամ թէ կնոջը փողոց նետէր։

ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ՝ «Հիւսն Շանթի, սէրն եւ դատաստանութեան երգիչը» 58 եր., գինը 20 կ.։ Հեղինակը ընդգծում է, որ գեղագէտ Շանթի մարմնեղէն պատկերների հետ կցորդւած են կըրքալից տպաւորութիւններ։ Ամենատարրական բաները ստանում են նրա մօտ սեռական բացատրութիւն։ Եւ սրա հետևանքը, որ Շանթի հերոսները, կամ հէնց ինքը՝ Շանթը ստիզեցին սեռի փիլիսոփայութիւնը։

ԱԲԳԱՐ ՊԱՅԱԶԱՏ՝ «Արծաթ ծաղիկ» (էսքիզ) 30 եր., գինը 10 կ.։ Սիրուն պատմւածք, բոդը է այն կօմէդիայի, որ վերջին տարիներս Սպիտակ ծաղկի տօն անունով սարքւում է և հարուստ, քնոյշ կին ու աղջիկ ծաղիկներով զարդարւած օտոմոբիլներով շրջում են ծաղկեայ կողովը ձեռին դրամի քսակը ուսով գցած ու իւրաքանչիւր անցորդի մի սպիտակ ծաղիկ ծախում յօդուտ թոքախտաւորների։ Աշխատութիւնը նւիրել է հեղինակը Ղարաբաղի Թեմի դպր. Նրա 75-ամեայ յոբելեանի առիթով), որի սանն է և որտեղից սատ-ցած իր դրօշակի վրայ ծածանում է կեանքի իմաստը ճանաչել ոչ թէ ոսկի ու արծաթի դէզերի մէջ, այլ մտքի որոնումները այս անհատասար աշխարհում իրականացնելում։

Л. Шант — „Старые боги“ Թարգմ. հայերէնից ռսերէն Կարապետ Դերւիշի, առաջարանով, 60 եր., գինը 75 կ.։ Ռահանաւորները թարգմանել է հայազն նշանաւոր ռուս բանաստեղծուհի օր. Մարիէտա Շահինեանը, որ աւելի ևս շուք է տալիս բաներ խիզճ թարգմանութեան։ Թարգմանիչը հէնց ինքն էլ իր ընդարձակ առաջաբանի մէջ շեշտում է, որ անկարելի է Շանթի ուրոյն, գեղ լեզուն բառացի թարգմանել, սակայն նա ամէն ջանք դրել է բաւարարել ռուս ընթերցողին։

ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ՝ «Դիւան Հայոց Պատմութեան, գիրք ԺԱ., Սիմէօն Կաթողիկոսի յիշատակարանը III վերջին մաս (1777—79) յաւելւածներով և ծանօթութիւններով, հնդկահայերի հանրագրի արտատպութիւն։ Տպւած Ալ. Մանթաշեանի կտակած դումարով, Հայ տառերի պիւտի 1500-ամ. և հայ. տպագր. 400-ամ. յոբելեանին։ Գէորգեան ս. էջմիածնայ ձեռագրանում ուսուցչապետ պ. Գէորգ Ալթունեան իր գիտական գրական աշխատութիւններով, որ շարունակ լոյս է ընծայում Մայր Աթոռի տպարանից մեզ առիթ է տալիս պայծառ պերսպեկտիւներ։ Եւ սկսում ենք համոզւել, որ մօտ ապագայում Գէորգեան Ճեմարանի գիտնական ուսուցչապետները էջմիածնայ գիտնական միաբանութեան հետ սերտ շաղկապւած պիտի հիմնեն ս. էջմիածնում Գրական կամաձեւ վէնետկի և վիէննայի բազմերախտ միաբանութեան կարգ Բիւխերի «Ժողովրդական տնտեսութեան ծագումը» բաղկացած է 12 գլուխներից, որոնցից իւրաքանչիւրը անկախ թէ նեղքուստ և թէ արտաքուստ մի տրակտատ է, որ Բիւխերը զանազան ժամանակներում կարդացել կամ գրել է։

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տիգրան Նազարեան

Rédacteur en chef et Directeur

Figran Nazarian

ՓԻՓԼԻՍ № 11 ՆՈՅԵՄԲԵՐ XXIV—1913 *Tiflis*

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

Կապոյտ երկնքում
Աստղեր են փայլում
Նաեւ լուսնեակը,

Ասենից սիրուն
Ամենից փայլուն
Է արեգակը։
ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ



ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

Ծն. 10 նոյեմբ. 1835 Թիֆլիս, † 13 օգոստ. 1913

Լուսանկարից Գր. Բաբալեան

Մինչդեռ իր պապերի ծննդավայր, հայութեան պարկերակ Ղարաբաղի Յոբելեար Դպրանոցի փառահեղ տօնախմբութիւններն էին կատարւում Շուշում, նրա պայծառ զաւակներից մեկը՝ անմահ Շիլլէրով, Գէօթէով հայութիւնը դաստիարակող քանաստեղծ, ուսուցիչ և նշանաւոր թարգմանիչ Գէորգ Բարխուդարեանը պատրաստւում էր հեռանալ մեր սգինքս աշխարհից։ Եւ երեքշաբթի, օգոստոսի 13-ին, կէսօրից յետոյ ժամը 2 ին նրա վեհ հոգին խաղաղ սլացաւ դէպի անհունը՝ դէպի իր երգած կապոյտ երկնքի աստղերը։

Գէորգ Բարխուդարեանի պապը գաղթել էր Ղարաբաղից Վրաստան։ Հայրը, աչքաբաց լինելով, իր տիրոջ, վրացի իշխանի հետ գնում է Պետերբուրգ, այնտեղ գերմանացի մի դերձակի աշակերտում և վերադառնալով, Թիֆլիսում բաց է անում օրինակելի արհեստանոց։ Իր Գէորգ որդուն տալիս է գիմնազիա և դեռ չսւարտած Թոյլատրում նրան գնալ Դորպատ և այնտեղ շարունակել ուսումը։ Աբովեանի, Նազարեանի, Պատկանեանների Դորպատը շատ մեծ դժւարութիւններով է հանում Գ, Բարխուդարեանը և աչքերի հիւանդութիւնն էլ խոչընդոտ է լինում նրան այստեղ աւարտելու ուսումը։ Ընկերների ու հօր յամառ պահանջով նա վերադառնում է հայրենիք և ընդունում ուսուցչութիւն անել Թիֆլիսում և գաւառներում ազգ. եկ.-ծխ., քաղաքային, պետական ուսումնարաններում և Ներսիս. դպրոցում։ Մեր դպրոցների ծաղկեալ օրերին Գ. Բարխուդարեանը էր Վրաստանի թեմական տեսուչը և սրա ու Պ. Սեդրաք Մանդինեանի նախաձեռնութեամբ կազմւեց Թիֆլիսում հայոց առաջին ուսուցչական նշանակալից ժողովը։

XIX դարու մեր դպրոցական և գրական բեղմնաւոր գործիչ Գէորգ Բարխուդարեանը 1901 թ., վաթսունհինգ աշունները անցնելուց յետոյ, թողնում է ուսուցչական ասպարէզը ծերութեան և մանաւանդ աչքերի տկարութեան պատճառով։ Թիֆլիսի Քաղ. Խորհուրդը նրա 18-աւեայ ամենաբարեխիղճ ծառայութիւնը քաղաքային դպրոցներում նկատի առնելով, նշանակում է նրան ցմահ կենսաթոշակ տարեկան 600 ր., իսկ Ներսիսեան դպրոցը տարեկան 450 ր. և բացի այդ գրւատում է Գէորգ Բարխուդարեանին, տօնելով նրա գրական-մանկավարժական արդիւնաւոր գործունէութիւնը։ Երաժըշտագէտ Մ. Եկմալեանը ձայնագրում է ալեզարդ յոբելեարի «Կապոյտ երկնքում աստղեր են փայլում» ամեն տեղ տարածւած սիրելի երգը։ Յոբելեարի ընկերներն ու կատարած մեծ գործը ճանաչողները դրւատում են իբրև օրինակելի, ճշտապահ, զթասատ,

անճնւէր, անսահման վեհանճն ու պարկեշտ մարդու։

Ֆաուստ, Վիլհելմ Տէլլ, Դոն-Կարլոս, Օրլէանի կոյսը, Զանգակի երգ, Մարիա Ստիւարտ, Նաթան իմաստուն և այլ գոհարների թարգմանութիւնների հետ Գէորգ Բարխուդարեանը տւել է մի շարք ինքնուրոյն բանաստեղծութիւններ, որ լոյս են տեսել և առանձին գրքերով։ Աղբիւրին սկսել էր իր աշխատակցութիւնը հէնց առաջին տարւանից։ Անտաո (Treilich Zeeth) տպագրւած է Աղբիւրում 1883 թ. և այնուհետև Գէորգ Բարխուդարեանը շարունակել է իր աշխատակցութիւնը մինչև մահը թէ Աղբիւրին և թէ Տարազին։ Մահից յետոյ դեռ երկար ժամանակ էլ կը պճնազարդւեն Աղբիւրում և Տարազում Գէորգ Բարխուդարեանի անտիպ ինքնուրոյն և թարգմանական գործերը։ Հոֆմանի նշանաւոր Տօքի և Մալի ըստամենայնի շքեղ պատանեկական հասակի վէպը, Աղբիւրում երբ կը վերջանայ, կը սկսենք Տարազում տպագրել Գէորգ Բարխուդարեանի երգիծաբանական երկը, որ նա շնորհեց մեզ այս տարի փետրւար ամսին։

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ
Ուսուցիչ

Գէորգ Բարխուդարեան վերջին տարիներս օր-օրի վրայ նւազելով, մանաւանդ աչքերը իսպառ կուրանալով, տանից համարեա դուրս չէր գալիս։ Սակայն շնորհիւ ակնաբոյժ բժշկապետ պ. Տիգրան Գէորգբէկեանի, զառամեալ բազմերախտ գրականագէտը համարեա վերածնւեց աչքերի օպերացիայից յետոյ և այնքան կազդուրւեց, որ կարողանում էր երբեմն յաճախել նոյնիսկ երեկոյթները մեր Գրական-Գեղագիտական Սալօնի։ Անշուշտ յիշում են ամենքը, որոնք ներկայ էին ի պատիւ պ. Մինաս Չերազի և տաճկահայ պատգամաւորների՝ Իզմիրլեանի ընտրութիւնից յետոյ 1908 թ. նոյեմբերի 18-ին տրւած մեր խնճոյքին, ուր երկու հակայ հայ գրական գործիչներ՝ Ղ. Աղայեանց իր խրոխտ «Չէ-թուն անկախ դու աշխարհիկ» և Գ. Բարխուդարեան իր եթերային «Ծղրարը, ուժից ընկած պաղազրով» երգեցին, թողնելով մեծ տպաւորութիւն։

Այնուհետև Շիլլերեան երեկոյթին, 1909 թ. դեկտ. 23-ին, երբ Գէորգ Բարխուդարեանը մտաւ Գրական-Գեղագիտական Սալօնը, բազմաթիւ հասարակութիւնը որոտընդոստ ծափահարութիւններով ողջունեց ծերունազարդ բանաստեղծին և յատկապէս իր համար պատրաստած գահի վրայ բազմելով, յուզւած ու զգացւած բացեց նա հանդէսը։

Գէորգ Բարխուդարեան համաշխարհային սիրոյ, աղատութեան դաղափարական երգիչ Շիլլերին մատոյց յարգանք, կարդալով օրհնութիւն նրա յիշատակին, բացատրելով հանդիսականներին Շիլլերի իմաստն ու բովանդակութիւնը։

Գէորգ Բարխուդարեանը
շրջապատւած իւրայիններով

Ի պատասխան սրան Շէքսպիրի հայ թարգմանիչ ալեզարդ պ. Սեւեքերիմ Արծրունին մի պերճ ճառով ողջունեց եւրոպական կլասիկների հոյակապ թարգմանիչ բազմերախտ Գէորգ Բարխուդարեանին, թւեց նրա կատարած մեծ գործերը գրական և մանկավարժական ասպարէզներում, առաջարկելով մշակել մի ձև երախտապիտութեան զգացմունք արտայայտելու եւրոպական կլասիկների փայլուն թարգմանիչ բանաստեղծին։

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ
Շուշում

Այս առաջարկը մեծ խնդակցութեամբ ընդունւեց և Ալէքսանդր Քալանթարի ղեկավարութեամբ սկսւեց ղրոյցը, որին մասնակցեցին պ.պ. Ակունեան, Աթանասեան, Աղաբաբ, Ատրպետ, Մալխասեանց, Ս. Սպանդարեան, Սօլօվեան, Փափազեան և այլն։ Ընտրւեց նոյնիսկ 12 հոգուց մի մասնաժողով և այլն և այլն, այս գեղ. երեկոյթի տպաւորութեան տակ։

Նշանակալից էր և անցեալ 1912 թ. հոկտ. 13-ին Համազգային Մեծ Ժողովանի նախատօնակը Գրական-Գեղագիտական Սալօնում նահապետ բանաստեղծ, ուսուցիչ, թարգմանիչ Գէորգ Բարխուդարեանի նախագահութեամբ։

* *
*

Վերջին անգամ Գէորգ Բարխուդարեանը նախագահեց Սալօնում Րաֆֆիի և Մերենցի յիշատակին նւիրւած երեկոյթին այս տարւայ մայիսի 23-ին, իր մահից հաղիւ երկու ու կէս ամիս առաջ։ Այդ օրը ամենքն համոզւեցին, որ XIX դարու երկրորդ կէսից արդէն հայ գրական հորիզոնի վրայ փայլող աստղ Գէորգ Բարխուդարեանը պատրաստւում է հեռանալ մեզանից և սլանալ դէպի յաւիտենականութիւն։

Ահա նրա վերջին ճառը, որ արտասանեց բազմերախտ բանաստեղծը ներկայ 1913 թ. մայիսի 23-ին՝

Մեծարգոյ հանդիսակա՛նք*)

Այսօրուայ մեր ժողովը բանալու պատիւը պ. Տիգրան Նազարեանը ինձ յանձնեց։ Ափսոս, որ անձնական տկարութիւնս չէ նեղում ինձ երկար ճառախօսել, ըստ արժանոյն քնորոշելով, սորանից 25 տարի առաջ հանգուցեալ մեր երկու քանքարաւոր վիպասանների նշանակութիւնը հայ գրականութեան համար։ Դո-

1) Քոյրը՝ Մարիամ. 2) Գ. Բարխուդարեան. 3) Մայրը՝ Թամարա. 4) Եղբայրը՝ Ալէքսանդր. 5) Հայրը՝ Նիկողայոս, 6) Քոյրը՝ Եղիսաբէթ։

*) Մեր խնդրանօք իր այդ խօսածը Գէորգ Բարխուդարեանը ինքն էլ անձամբ գրի առաւ, որ պահւում է մեր արխիւում։ Խմբ.

քա են՝ առաջինը Մերենցը, (դոկտոր Յովսէփ Շիշմանեանը և երկրորդը՝ Րաֆֆին, (Յակոբ Մելիք Յակոբեանը), երկու առաջին մեծութեան լուսաւոր աստղեր հայ դպրութեան հորիզոնի վրայ, որոնք իրանց հիանալի երկերով հարստացրին և նոր փայլ տուին մեր գրականութեանը, առաջինը, լուսաբանելով ազգային պատմութեան մի քանի փառաւոր էջերը և երկրորդը, նկարագրելով հայ ժողովրդի հասարակական կեանքը։ Անշուշտ ձեզանից շատերը լաւ ծանօթ են այդ երկու հռչակաւոր հեղինակների գրական գործունէութեան հետ և կարող են մեծ հաճութիւն պատճառել մեր ժողովին իրանց յիշողութիւնները և անձնական տպաւորութիւնները հաղորդելով։ Ուրեմն խնդրում եմ խօսել ցանկացողներին յայտնել իրանց ցանկութիւնը։

***

Անցած ամեռ Գէորգ Բարխուդարեան դարձեալ հիւանդ պառկած էր անկողնում։ Մարտի 27-ին քաղաքային պօստով նրանից ստացայ հետևեալ նամակը՝

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ ինքնաձեռագիր նամակը և ծրարը

Գէորգ Բարխուդարեան

1) Գէորգ Բարխուդարեան, 2) Քոյրը՝ Մարիամ Արշակունի (Սադռշիկեան) 3) քրոջը՝ աղջիկ Դայիանէ Բուդղանեան. 4) Հայրը՝ Նիկողայոս Բարխուդարեան. 5) Քրոջ տղան՝ Յովհաննէս Պալասանեան. 6) Քրոջ աղջիկը՝ Կատարինէ Հայրումեան. 7) Մայրը՝ Թամարա Բարխուդարեան. 8) Քրոջ աղջիկը՝ Ֆլօրա Պալասանեան. 9) Փեսան՝ Մոսէսեանոս Պալասանեան. 10)Քոյրը Եղիսաբէթ Պալասանեան։

Նոյեմ Ֆաուստին, կը լուսանկարենք ու հետևեալ տարին հէնց, որ ինքը թևակոխէ իր ութսունամեակը, կը տօնենք իրան և այլն։

***

Այս անցած ամառը սովորականից դուրս շոգեր արին Թիֆլիսում։ Բժշկի խորհրդով Գէորգ Բարխուդարեանին տարան ամարանոց, բայց նա այնտեղ երկար չը մնաց և վերադարձաւ Թիֆլիս, անշուշտ զգալով իր մօտալուտ վախճանը։

Քանիցս հարցնում է Տ. Նազարեանին, փափագ յայտնելով կրկին տեսնել հետը։ Տարաբախտաբար Տ. Ն. Ղարաբաղ գնացած լինելով, վերադառնում է Թիֆլիս, երբ Գէորգ Բարխուդարեանը արդէն վախճանած է լինում։

Այսօր ժամանակն ու տեղը չէ հրապարակ հանել, մանաւանդ վերջին տարիներում Գէորգ Բարխուդարեանի վիշտն ու կսկիծը այն արհամարհական վերաբերմունքի համար, որ տածում էին մեր գրական շրջանների մի քանի մասերը դէպի լքեալ ծերունազարդ բանաստեղծն ու իսկական մարդը...

Բարոյական պարտք ենք համարում հրապարակաւ արտայայտել երախտագիտական զգացումներ տ. Դայիանէ Բուդղանեանին, իր ամուսնուն ու զաւակներին, որոնք վերջին տարիներս լիուլի սիրով և ակնածութեամբ, քնքոյշ խնամատարութեամբ քաղցրացնում էին զառամեալ բանաստեղծի կեանքի վերջին շրջանը։

Գէորգ Բարխուդարեանի մահով վերջացան դորպատեան արշալոյս ուսանողութեան կենդանի տիպերը։

Ներկայ նոյեմբերի 29-ին Գրական-Գեղագիտական Սալօնը իր հանդիսաւոր jour fixe-ը նւիրում է Գէորգ Բարխուդարեանին, որի գործերը հրապարակ կը հանուեն երկրիս օտարազգի արեւմտագէտների ու գրականագէտների առաջ և կը մատուցանուին նրա յիշատակին յարգանք ու պաշտամունք։

Տ.



Գէորգ Բարխուդարեանի՝ 78-ամեայ զառամեալ հիւանդ գրականագէտի այս մարգարտաշար ինքնաձեռագիրը թող օրինակ լինի մեր սկսնակ գրողների համար։

Խմբ.

Նոյն օրն էլ այցելեցի ծերունազարդ բանաստեղծին, որ անկողնի և մաքուր ճերմակեղէնի մէջ նման էր մի սպիտակ աղաւնու։ Հարցուբարևներից յետոյ մահճակալի առաջ դրած սեղանի գրքերի միջից հանեց մի տետր և յանձնեց ինձ իր նւէրը շատ սիրալիր, լի գոհութեամբ և զգացումներով մի ճառով։ Այդ նւէրը իր անտիպ աշխատութիւններից մի ոտանաւոր երգիծաբանական պատմուածք է, որ կը տպագրւի Տարազում Նոր Տարւանից։

Ֆաջալերեցի ծերունազարդ բանաստեղծին, ասելով, որ շուտով գարունը կը գայ, կը կազդուրւի, և իրան խալաթի մէջ, ֆէսը գլխին, որով շատ նման է լի-

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Մեր հին բարեկամուհին է եղել պատճառը, որ երբ Գէորգ Բարխուդարեանցը զգացել է իրան վատառողջ, խնդրել է իր քեռորդի տ. Գայիանէ Բուդաղեանին, որ անպատճառ ինձ հրաւիրեն իրան բժշկելու։

Յուլիսի 1-ին ես մտայ Գէորգի տնջարանը. նա պառկած էր և հանգիստ շնչում էր, բայց տրտում-տխուր էր և մտախոհ. բարևեցի և խնդրեցի, որ երեսը ինձ դարձնի, որ մի լաւ տեսնեմ։ Նա ժըպտաց և զգուշութեամբ շուռ եկաւ դէպի ինձ։ Տ. Գայիանէն պատասխանելով իմ հարցին, ասեց, որ այո, տրտում է, այդպէս է վերջին ժամանակները և ուշաթափւում է։

Տ. Գայիանէ Բուդաղեեան

Գէորգ Բարխուդարեանի քրոջ (Արշակունու) դուստրը, որի մօտ և ապաստանւած էր բանաստեղծը վերջին տարիներս և նրանից օրինակելի զաւակի խնամք էր ստանում։

—Գէորգ ջան, կարող ես նստել, արի, օգնենք, նստիր.—նըստացրինք։—Ի՞նչ կայ, ինչո՞ւ ես ինձ կանչել, մի կարգին, լաւ բժիշկ կանչէիր։ Թպտաց և ասեց, որ «մխիթարւելու համար իմ կանչել քեզ և ոչ բժըշկելու, որովհետև իմ բանս վերջացած է»։—Էհ, հէր օրհնած, ձեռը վեր կալ, դու էլ բան ասացիր.—երեք օրումը ես քեզ կը լաւացնեմ. դու այդ թող, դա հիշտ բան է, դու ինձ ասա՝ քանի՞ տարի է, որ դուք այս բնակարանումն էք (իր ամուսնացած քեռորդի տ. Գայիանէի բնակարանումը և նրա անմիջական խնամատարութեան ներքոյ)։ Բանն և հինգ և աւելի տարիներ։ Դէ հիմա ես քեզ ասեմ, Գէորգ ջան, որ քեզանից առաջ ես եմ այստեղ բնակել, հէնց այս քո երկու սենեակումը... և պատմեցի, թէ ինչպէս դիշերը լուսամտիցը գողը մտաւ սենեակս և ինչպէս քաղաքավարի կերպով ես նրան ճանապարհ դրեցի։ Այս անգամ Գէորգս շատ ծիծաղեց և մտաւ բնական տրամադրութեան մէջ։ Ես քննեցի նրան և դեղատոմս գրելով ու խորհուրդներ տալով և յուսադրելով ճիշտ քարեաւ ասացի։

Տ. Գայիանէն ասեց, որ վաղուց է, ինչ քեռին չէր ծիծաղել...

Բայց ասեցի, դժբախտաբար իսկապէս որ, ինչպէս ինքն է ասում, «բանը վերջացած է», կազմւածքը մաշւել է և այլ ևս չէ ուղում ապրել, սիրտը շատ թոյլ է, զարկերը խառն ու փնթոր. ծերութիւնը միանգամայն յաղթահարել է։ Գ. Սունդուկեանցը, թէև մօտ տաս տարով մեծ էր սրանից, բայց նա պահպանւել էր, առոյգ էր...

Այսուամենայնիւ, Գէորգ Բարխուդարեանցը այնքան կազդուրւեց համեմատաբար, որ հնարաւոր եղաւ յուլիսի 7-ին տեղափոխել նրան Թիֆլիսի խեղդող շոգերիցը—Աւչալ։ Սակայն ճիշտ մի ամսից յետոյ, այն է օգոստոսի 7-ին, չորեքշաբթի օրը Գէորգին յետ բերին Թիֆլիս. նա ինքն էր խնդրել, ստիպել, որ բերեն. ես մեռնելու համ, ասել էր, տարէք ինձ Թիֆլիս՝ այնտեղ մեռնեմ։

Դարձեալ հրաւիրեց ինձ. ես տեսայ նրան. մխիթարեցի, յիրաւի որ բացի մխիթարանքը—ոչինչ չէր մնացել բժշկութեանը բաժին... կարճատև օրեր, եթէ չասեմ ժամեր էին մնացել Գէորգին բաժին։ Հինգշաբթի օրը նա ինքը կամովին մօտ է կանչել տ. Գայիանէին և միւս մերձաւորներին և յայտնել, որ բժ. Նաւասարդեանն էլ չը կարողացաւ օգնել, որ պէտք է շուտով մեռնի. և... սկսել լալ և հեկեկալ ու վերջին մնաս բարովը ասել մի առ մի բոլորին։ Նա արտասւեց և իմ առաջ և տրտնջաց հասարակութեան անտարբերութեան վրայ...

Այնուհետև նա ընկաւ զառանցանքի մէջ։ Մի անգամ տեղիցը վեր էր թռել, երբ շարժիլ անգամ չէր կարողանում,—վեր թռաւ վազելու՝ հրդեհ էր իբր թէ, և երբ միւս օրը ես եկայ, ինձ ասեցին, որ այլ ևս ոչինչ չէ խօսում, չէ ուտում և ոչոքի չէ ճանաչում։ Այդ՝ շաբաթօրն՛ էր, չորեքշաբթի ժամի $10^1/_2$-ին։ Ես գտայ Գէորգին հոգեւարքի մէջ. հրկու անգամ ձայնեցի՝ Գէորգ ջան, ոչ է հետդ խօսում, բայց նա ծանր շնչում էր և լուռ էր, երբորդ անգամ հարցրի, պատասխանեց՝ բժիշկն է։

Գէորգ Բարխուդարեան

Իր քրոջ (տ. Արշակունի) թոռների օր, Մատէն (այժմ դաշնակահար) և Գէորգ (այժմ Շուշում բեալ. ուսումն. ուսուցիչ) Բուդաղեանների հետ։

Երկուշաբթի մի անգամ ևս հարցրի Գէորգին՝ ոչ է խօսում հետը և նա մի քանի անգամից յետոյ — դարձեալ պատասխանեց՝ «բըժիշկն է»։

Շաբաթ օրւանից սկսած և մինչև վերջին շունչը, որ նա աւանդեց երեքշաբթի ժամի 2 ին կէսօրից յետոյ, Գէորգը այլ ևս ոչ մի խօսք չէ արտասանել և գտնւել է անյուշ դրութեան մէջ. ոտքի և չէ զգացել ոչ մի տանջանք։ Ես այցելեցի բարեկամիս մի վերջին անգամ ևս—երեքշաբթի ժամի 1 ին, բայց դժւարացայ հոգին աւանդելու վայրկեանին ներկայ գտնւել. ժամի 2-ին ընդմիշտ հեռացաւ մեզանից մեր բազմավաստակ, օրինակելի և սիրելի Գէորգ Բարխուդարեանցը։

Գէորգ Բարխուդարեան

Կատարինէ Հայրամեան, Արշակունի Քրոջ աղջիկը

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Գէորգ Բարխուդարեանի յուղարկաւորութիւնը եւ թաղումը

Կիրակի, առ. 10 ժամին, օգոստոսի 18-ին, Ասուածածնայ տօնին քանաստեղծ ուսուցիչ և թարգմանիչ Գէորգ Բարխուդարեանի մարմինը ազգականների, մերձաւորների և բարեկամների ուղեկցութեամբ ընակարանից բերուեց մայր եկեղեցին, ուր ներկայ էին Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը, հայ լրագիրների ներկայացուցիչներ, Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար իշխան Ն. Արղութեան - Երկայնաբազուկ, Ներսիսեան դպրոցի և մի քանի ուրիշ հաստատութիւնների ներկայացուցիչներ։

Գէորգ Բարխուդարեան

Մահուան տաղնապում

Պատարագից յետոյ դագաղը դրին Վանքի տաճարի բակում, ու կատարուեց հոգեհանգիստ։

Այստեղ «Մշակի» խմբագիր Ա. Քալանթար արտասանեց հետեւեալ դամբանականը՝

Այսօր հրաժեշտ ենք տալիս Գէորգ Բարխուդարեանին, մեր գրականութեան աչքի ընկնող աշխատաւորներից մէկին։

Գէորգ Բարխուդարեանը աւելի քան կէս դար է գործել հայ գրական ասպարէզում, առաջնակարգ տեղ բռնելով իբրև եւրոպական կլասիկների թարգմանիչ։

Եթէ Մխիթարեանները ծառայութիւն են մատուցել հայ գրականութեանը՝ տալով հին յունական և հռոմէական գրականութեան այնպիսի դանձեր, ինչպէս են «Իլիականը», «Ոդիսականը», «Ենէականը» և այլն, Գէորգ Բարխուդարեանը ձեռնարկել է թարգմանելու եւրոպական գրականութեան այնպիսի լուսաւոր աստղերի գրւածքները, ինչպէս են Շիլլերը և Գէօթէն։

Շնորհիւ Բարխուդարեանի՝ Շիլլերը դարձաւ ընտանի հայ գրականութեան համար։ Հայ հասարակութիւնը սիրեց գերմանական ականաւոր բանաստեղծին, ինչպէս իր հարազատին։

Եւ եթէ ճիշտ է, որ Շիլլերի նման հանճարները համաշխարհային են և պատկանում են բոլոր ազգերին հաւասարապէս, ապա պէտք է արձանագրել, որ Գէորգ Բարխուդարեանը նպաստեց ժողովրդականացնելու եւրոպական այդ համակրելի բանաստեղծին հայութեան մէջ և տարածելու հայ ժողովրդի մէջ այն գաղափարները և զգացմունքները, որոնք այնքան առատօրէն ցայտում են Շիլլերի աքանչելի քնարից՝ ազնըւութիւն, անձնւիրութիւն, շիտակութիւն, բողոք բռնութեան և անիրաւութեան դէմ, անշուշտ հաւատ դէպի իդէալների մարմնացումը և հասարակական տենչերի իրականացումը։

Բարխուդարեանը գործեց և իբրև մանկավարժական գործող, աշխատեց թէ Թիֆլիսում և թէ գաւառում, փորձեց իր գրիչը ինքնուրոյն պիէսների, ոտանաւորների և ազատ գրւածքների մէջ, բայց նրա գլխաւոր երախտիքը այն թարգմանութիւններն են, որ նա տւել է հայ նորագոյն գրականութեան։

Նա տւեց եւրոպական նորագոյն քաղաքակրթութեան նշանաւոր գրականագէտների հրկասիրութիւնների թարգմանութիւնները մաքուր, հանրամատչելի աշխարհաբար լեզուով, հմտակազմ գերմանական բանաստեղծների ներքին ոգեորութեամբ, վերապրելով այն զգացմունքները, որոնցով երկնել և ստեղծագործել են հեղինակները իրանց անմոռանալի երկերը։

Եթէ հին դարում մեր թարգմանիչները բացի ս. Գրքից տւին և ժամանակակից յոյն և լատին գրականութեան կոթողների թարգմանութիւնները, Բարխուդարեանն էլ թարգմանիչ էր նորագոյն համաշխարհային գրականութեան գեղեցիկ գործերի։ Եւ հայ ազգը չի մոռանայ Բարխուդարեանի հոյակապ գործը, որը կապեց հայ գրագէտ հասարակութիւնը եւրոպական հանճարների հետ։



Գէորգ Բարխուդարեան

Վերջին լուսանկարը

Գնա յաւիտենականութեան գիրկը, թանգագին գործի ներկայացուցիչ, բայց և հաւատի եղիր, որ յաւիտենական է և այն գեղեցիկ գործը, որը տւիր հայրենի գրականութեան։

—

Մարմինը ամփոփւեց վէրայի գերեզմանատանը։

Գէորգ Բարխուդարեանը իր թարգմանութիւնները Շիլլերից Գէօթէից նախ տպագրել է «Փորձ»-ի մէջ և ապա յոյս են տեսել առանձին գրերով։

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ

անմոռաց յիշատակին

Հանգուցեալը, որպէս Շիլլերի, Գէօթէի, Լէսսինգի, Շէքսպիրի, Պէտեօֆիի թարգմանչի բարձր համբաւը միաբերան ճանաչւում է ամենից։ Բայց շատերին յայտնի չէ նրա մի հմայքը, կարդալու արւեստը, որով նա իր թարգմանութիւնները ուղղակի կենդանի էր կացուցանում իր ունկնդիրների առաջ։ Հէնց թարգմանելիս արդէն նա փոյթ ունէր լաւ վերծանութեան՝ միտք առնելով կարդալու մասին։ Նա իր թարգմանութիւնը չէր սկսում գրչով, թարգմանածը անմիջապէս չէր անցուցանում թղթի վրայ, այլ բերանացի և մտքով այնքան կոկում և յղկում էր ամեն մի նախադասութիւն, մինչև որ իր արտասանութեամբ իր ականջին բերկրութիւն էր պատճառում։ Յետոյ, երբ որ չափ ու ձեւով թարգմանածը թղթի վրայ էր փոխադրում, այստեղ էլ հանգուցեալը ինքնուրոյն կերպով էր վարւում. թուղթն առջեը դրած, նա իսկապէս չէր գրում, այլ լուրջ ձայնով արտասանում էր, իսկ այդ արտասանածը թղթի վրայ կարծես ինքն գրոշմւում էր առանց զըլխատառերի եւ կէտադրութիւնների, իբրև թէ նախա-

Գէորգ Բարխուդարեան

դասութիւնները շարուած էին լոկ միայն յիշողութեան համար, որպէսզի այնքան մարգարիտներից բան չըկորչի։ Այդպիսի գրութեան վրայ միայն յետոյ նա գլխաւորներն ու կէտադրութիւնները կարգի էր բերում, երբ որ թուղթը տպագրութեան պիտի յանձնըւէր։

Տպագրելուց առաջ նա սովորութիւն ունէր իր աշխատութիւնը կարդալ մի փոքր շրջանում, առաւելապէս արժանայիշատակ Աբգար Ծովհաննիսեանի սալօնում։ Զարմանալի էր. կարդացածի ահագին ազդեցութիւնից յետոյ, տպագրածը համեմատաբար սառը տպաւորութիւն էր գործում։ Եւ երբ նա լսում էր, թէ տպագրածը պակաս հաւանելի է, նա զայրանում էր և բողոքում էր, թէ «դուք կարդալ չգիտէքը»։

Եւ յիրաւի, Գ. Բարխուդարեանի օրինակելի փափուկ ընթերցանութիւնը, կարդալու արուեստը մի արտասովոր բան էր մեր բիւրատցի շրջանում։ Նա գիտէր ոսկի կշռով շեշտել, երկարել, սղել, ամեն մի բառին շունչ տալ, նրանց մէջ պատշաճ եւևէջ, ներդաշնակութիւն, երաժշտութիւն հնչեցնել, միով բանիւ մուսաների չնաշխարհիկ մթնոլորտը ստեղծել։ Ադամեանն էլ լաւ կարդացող էր, բայց ինչ մեծ զանազանութիւն այս երկու արուեստագէտների մէջ։ Ադամեան մեծ դերասան էր, և ուրեմն մասամբ շարժ կար նրա արտասանութեան մէջ։ Բայց այս շարժը արուեստագէտի շարժ էր։ Ադամեանին ոչ միայն ականջով լսում էիք, այլ և աչքով տեսնում։ Բարխուդարեանը ազդում էր միայն ձեր լսողութեան վրայ։ Սա մի ուրիշ արուեստ է—ուսուցչի արուեստ։ Բարխուդարեանը այնքան պարզ էր արտասանում, որ կարծես թէ ոչ մի արուեստ չունէր, բայց և այնպէս մի աննկարագրելի արուեստով էր հնչեցնում Շիլլերի և Գէօթէի նուրբ և մեղմ յոյզերի լարերը։

Ափսոս, տօնելի Գէորգը այսպիսի արտայայտիչ արուեստը տարաւ իր հետ, մեր ուսուցիչներն ու աշակերտները չօգտուեցան։

Սեդրաք Մանդինեան

Shillers

ԴՕՆ ԿԱՐԼՈՍ

Don Carlos

III գործողութիւն, X երեւոյթ.

ՄԱՐԿԻԶ

Նայեցէք ձեր շուրջ,
Նայեցէ՛ք, արքայ, հրաշալի բնութեան։
Նա ազատութեան վրայ է հիմնուած—
Եւ ինչ հարուստ է այդ ազատութեամբ։
Մեծ Արարիչը կաթիլ ցօղի մէջ
Դնում է որդնին, և մինչև անգամ
Ապականութեան մեռած փոսերում
Ազատութիւն է տալիս հաճոյքին։—
Բայց որքան նեղ է և աղքատ է ձեր
Արարչութիւնը։ Տերևի ձայնը
Սարսափեցնում է քրիստոնէական
Աշխարհի մեծին—Դուք ամեն տեսակ
Առաքինութեան առաջ—Դուք դողում էք—
Իսկ նա—այդպէս չէ—Նա ազատութեան
Զը կամենալով մի արգելք դնել—
Նա թոյլ է տալիս իր աշխարհի մէջ
Անթիւ չարիքները—Նրան, Ստեղծողին,
Ոչ ոք չէ տեսնում։ Նա համեստաբար
Ծածկել է իրան յաւիտենական
Օրէնքների տակ։ Դուցա է տեսնում
Ազատամիտը և ոչ թէ Նրան։
«Ինչ պէտք է Աստուած», ասում է նա մեզ,
«Ինքը աշխարհը շատ բաւական է»։
Եւ մի քրիստոնեայ իր ջերմ աղօթքով
Չէ գովել Նրան աւելի, քան թէ
Ազատամիտը այս հայհոյանքով։

ԹԱԳԱՒՈՐ

Դուք յանձնառու էք իմ տէրութեան մէջ
Տարածել վսեմ այդ գաղափարը։

ՄԱՐԿԻԶ

Դուք, դուք կարող էք։ Ձեր ժողովրդի
Բաղդաւորութեան նւիրեցէք, տէր,
Ձեր զօրութիւնը, որ—մինչև հիմա—
Միայն ձեր գահի փառքին էր նւիրած—
Վերականգնեցէք մարդու պատիւը։
Թող քաղաքացին լինի այն, ինչ որ
Առաջ եղել է։ Թող թագաւորին
Լինի նպատակ—լինի միակ պարտք—
Իր եղբայրների իրաւունքն յարգել։
Եւ երբ որ մարդը, ազատ ապրելով,
Կը սթափի, կը զգայ իր մեծ արժէքը—
Եւ ազատութեամբ կառաքինանայ—
Երբ որ երջանիկ կանէք աշխարհում
Ձեր տէրութեանը, այն ժամանակ, տէր,
Իրաւունք ունիք տիրել աշխարհին։

Գէորգ Բարխուդարեան

ՇՒԷՅՑԱՐԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՕՐՕՐՈՑԸ

(Սկիզբը Տարազ № 9)

II

Շուէյցարիայի ներքին կուսակցական եւ իմքնավարութեան ձեւը

Կարլոս Մեծէն յետոյ նրա պետութիւնը, ինչպէս յայտնի է, բաժան-բաժան եղաւ առաջ նրա որդոց մէջ, և յետոյ նրա աւելի հեռու ժառանգների մէջ։ Աւելի զօրեղ ցեղեր կազմեցին առանձին պետութիւններ։ Ի միջի այլոց գոյացաւ Ալամաննների մեծ պետութիւնը, որ բռնում էր այժմեան բոլոր գերմանական Շուէյցարիայի կանտոնները։ Բացի սրանից այդ Ալամաննացոց պետութեանը պատկանում էին Էլզասի մեծ մասը, գլխաւորապէս Իւրա լեռան շղթան ու հովիտների արևելեան սահմանները։ Այդտեղ գերիշխանութիւնը անցաւ Ցէհրինգեան (Zähring) դուբսական իշխանատոհմի ձեռքը։ Իսկ «երկրների» (land), գաւառների կամ համայնքների ներքին ինքնավարութիւնը, վարչական և դատաստանական կազմակերպութիւնը մնաց անփոփոխ։ Այնպէս որ փոխուեց երկրի թագաւորը կամ ծայրագոյն պետը և ոչ թէ համայնքների ներքին կառավարիչները։

Ցէօդալական իշխանները, որոնց յանձնուած էր ամբողջ գրաֆութիւնների (կոմսութիւնների), գաւառների կառավարութիւնը, պահպանեցին իրանց իշխանութիւնները։

Իսկ ինչ վերաբերում է Շուէյցարիայի ազատութեան օրօրոցին, այն է Ուրի, Շվից և Ունտերվալդէն կանտոնների վարչական դրութեանը, նրանք պահպանեցին իրանց ինքնուրոյնութիւնը, որովհետև նրանց լեռնային դրութիւնը արգելում էր պետական իշխանութեանը խառնուել նրանց ներքին կեանքին ու կառավարութեանը։ Նրանք թէև ենթարկւում էին Ցէհրինգների իշխանութեանը, բայց այդ հպատակութիւնը արտաքին էր։ Ուրիում զօրեղացել էին առանձին ազնուական տոհմեր, նրանց իշխանութեանը ժողովուրդը ընտելացել էր ու այդ տոհմերին նայում էր ինչպէս իր տեղական, երկրացի ու բնիկ իշխանների։ Այդ ազնուական տոհմերից յայտնի են Ատտինգհաուզենները, Սիսիկօնի*) գրաֆները (կոմսերը), Սիլենի իշխանները և այլն։ Բայց ոչ մի տոհմ այնքան յարգուած չէր, ինչպէս Ատտինգհաուզենեան տոհմը։ Տեղական ազնուական տոհմերից են ընտրւում ձորապետները կամ «ամմաննները»։ Այս պատճառով այդ տոհմերի իշխանութիւնը ժամանակի ընթացքում դառել էր ժառանգական։

Բացի սրանից Ուրին և Շվիցը ենթարկւում էին հոգևորական իշխանութեանը։ Բանը նրանում է, որ Կարլոս Մեծի թոռը, այն է Լիւդովիկ Գերմանացի**) կայսրը 853 թուին Ցիւրիխում հիմնեց սուրբ Ֆելիկսի կուսանոցը և նուիրեց նրան իր դուստր Հիլդիգարդին։ Այդ կուսանոցին նա նուիրեց իր կայսերական կալքերից ամբողջ Ուրին, որը այն ժամանակ լատիներէն անուանւում էր «pagellum Uroniae»։ Այդ կուսանոցի առաջին մայրապետը կայսեր դուստրն էր։ Ուրեցին կայսրը իր «կայսերական» Ուրի «երկիրը» իրան լեռներով, դաշտերով, սեղերով, անտառներով, գետերով—և այլն բաշխեց կուսանոցին, կամ նրա վանամայրութեանը (Abtei)։ Երկրի ժողովուրդը կայսերական հպատակներից դարձան վանքապատկան «ճորտեր» կամ ինչպէս միջնադարեան գերմաներէն բարբառով «Աստուածատան Մարդիկ» (Goteshaus leute)։ Աստուածատուն անուանւում էին վանքերը և եկեղեցիները։ Բացի կամաւոր նուէրներից, եկեղեցիները ու վանքերը ստանում էին իրանց պատկանեալ կալքերում ապրող ժողովրդից տուրքեր, որոնք բաղկանում էին բնական բերքերից, ինչպէս են, օրինակի համար, ցորեն, իւղ, պանիր, բուրդ, գառ, ուլ և այլն։ Աւելի մեծ են եկեղեցապատկան կալքերի բնակիչների տուրքերը, քան թէ վանքապատկան։

Վանքերը կառավարում էին իրանց կալքերը առանձին տնտեսների ձեռքով. նրանք անուանւում էին «Մայօր» (major), մեծ կամ կառավարիչ։ Այդ կառավարիչների իրաւասութեանը վերաբերում էին միմիայն տնտեսական գործերը։

Ցէհրինգների (Zähring) իշխանութիւնը, Ուրիում, Շվիցում ու Ունտերվալդէնում աւելի թոյլ էր։ Շվիցը և Ուրին կամենում էին հաւասարւել «Ցիւրիխին», այսինքն վարչական տեսակէտից դառնալ կայսերական «Կուսակալութիւն» կամ գերմաներէն Reichs Vogtei։ Կուսակալը նշանակւում էր կայսրից և նրա իրաւասութեանը պատկանում էին ընդհանուր վարչական գործերը։

Իսկ «ձորերի» ու «երկրի» ներքին ինքնավարութիւնը ու արդարադատութիւնը կենտրոնացած էին բնիկ «ձորապետների» ու «երկրապետների» ձեռքում։ Արդարադատութեանը ու դատաստանական գործերին մասնակցում էին ժողովրդի ներկայացուցիչները։

Շուէյցարիացիների հին ազատութիւնը ու արտօնութիւնները կայսրները ընդունում էին և յարգում։ Ամեն կայսր գահը նստելուց յետոյ առանձին «գրով» հաստատում էր այդ արտօնութիւնները։

Կայսրները գնահատում էին այդ երեք կանտոնների հաւատարմութիւնը։ Նրանց աչքում մեծ նշանակութիւն ունէը Ուրին, որովհետև Սան-Գոտարդի ճանապարհն անցնում էր Ուրիի սահմաններով։ Գերմանացոց կայսրները միմիայն այդ ճանապարհով կարողանում էին հաղորդակցութիւն ունենալ իրանց Իտալիայի սահմաններում գտնւող երկրների ու բնակիչների հետ։ Ուրիացիք եթէ ապստամբէին, կարող էին ամեն ժամանակ կտրել այդ ճանապարհը և բոլորովին անջատել Իտալիան Գերմանիայից։ Այս պատճառով կայսրները զգուշութեամբ էին վարւում ուրիացիների հետ։ Բայց և այնպէս նրանք ուրիացիների արտօնութիւնները չէին ճանաչում և ընդմիշտ չէին հաստատում առանձին օրէնքներով, այլ ամեն անգամ առանձին «գրերով»։ Օրէնքով հաստատած արտօնութիւնը ունի մշտական և ամուր բնաւորութիւն, իսկ առանձին «գրով» կամ հրովարտակով հաստատութիւնն ունի ժամանակաւոր բնաւորութիւն և պարտաւորացուցիչ է միմիայն հաստատող թագաւորի կամ կայսրի համար։ Այս զանազանութիւնը լաւ էին հասկանում կայսրները։

---

*) Սիսիկօնը այժմ կազմում է մի ծուխ կամ համայնք։ Նա գտնւում է Աքսեն-շտրասսէ ճանապարհի վրայ Բրունեննի ու Ալտդօրֆի մէջ տեղում, ծովի ափին։

**) Լիւդովիկն «Գերմանացի» մականունը տւած է այն պատճառով, որ նա թագաւորում էր Կարլոս Մեծի պետութեան գերմանական մասում։

III Միջնադարեան հասարակական կազմակերպութիւնը Գերմանիայում եւ Շվէյցարիայում

Միջնադարեան Շվէյցարիայի հասարակական կազմակերպութիւնը միևնոյնն էր, ինչոր բոլոր գերմանական ցեղերի կազմակերպութիւնը։ Պետական գերիշխանութիւնը պատկանում էր թագաւորին կամ կայսրին։ Նա համարւում էր և ամբողջ պետութեանը պատկանող երկրի «տէրը»—նրա տիրապետութիւնը անւանւում էր «dominium emines» այսինքն «գերագոյն տիրապետութիւն»։ Նա բաշխում էր պետական հողի մասերը մարմնաւոր իշխաններին, որոնք նշանակւում էին երկրի կառավարիչներ գրաֆի (կոմսի) և ուրիշ տեսակ պաշտօններով։ Այդ իշխանները կազմում էին ազնւական դասակարգը։

Ազնւականներն ունէին հին ծագում և համարւում էին տեղական բնիկ պետեր։ Կամ նրանք ստանում էին ազնւականութիւն տէրութեան ծառայութեան միջոցով։ Ռոճկի փոխարէն նրանք ստանում էին այն տուրքերը և բնական «բերքերը», որոնք պատկանում էին տէրութեանը կամ երկրի գերիշխանին։ Նոյնը նկատում ենք միջնադարեան Շվէյցարիայում։ Այնտեղ կային հին տոհմերին պատկանող ազնւականներ. նրանք կառավարում էին «երկիրը» ամմանների պաշտօնով և համարւում էին երկրի բնիկ «առաջնորդները և կառավարիչները»։ Օրինակ՝ Ատտինգհաուզենների տոհմը Ուրիում և այլն։ Կային ուրիշ ազնւականներ, որոնք իրանց ազնւականութիւնը ձեռք էին բերել յետոյ պետութեան ծառայութեամբ։

Երկրորդ տեղը բռնում էին հոգեւոր ազնւականները, այն է եպիսկոպոսները, աբաաները և այլն։ Նրանք նոյն իշխանութիւնն ունէին, ինչոր մարմնաւոր ազնւականները։ Նրանք կառավարում էին ու դատում այն ժողովուրդը, որը բնակւում էր եկեղեցական և վանքապատկան կալւածներում։ Որովհետև նրանց ևս կալւածքները բաշխում էր երկրի գերիշխանը (թագաւորը կամ կայսրը), նրանք համարւում էին պերիշխանի վասսալներ։ Թէև դեռ 853 թ. Լիւդովիկ Գերմանացին բաշխեց Ցիւրիխի սուրբ Ֆելիքսի կուսանաց վանքի «վանամայրութեանը», բայց մի ուրիշ «բաշխման գրից», որ տւել էր Օտտօ առաջին կայսրը 952 թ., պարզ երևում է, որ Լիւդովիկ Գերմանացին չնորհել էր վերոյիշեալ սուրբ Ֆելիքսի վանքին ոչ թէ «ամբողջ» Ուրի երկիրը, այլ առանձին կալւածքներ։ Գերիշխանական տիրապետութիւնը մնում էր կայսրի ձեռքում և նա շատ ուրիշ կայքեր բաշխում էր այն ազնւականներին, որոնք կայսրին ծառայում էին զանազան պաշտօններում։

Երկրի բնակիչների երրորդ և բազմաթիւ մասը բաղկանում էր հասարակ ժողովրդից, այն է գիւղացիներից և քաղաքացիներից։ Գիւղացիները բաժանւում էին երեք կարգի։

ա) Իրանց թւով առաջին տեղը բռնում էին «Unfreie», որ բառացի թարգմանութեամբ նշանակում է «ոչ—ազատ», այսինքն ճորտերը. այն է 1) մարմնաւոր ազնւականների ճորտերը, որոնք նստած էին նրանց հողերի վրայ։ Սրանց թիւը տարեցտարի քչանում էր, որովհետև ազնւականները կամ բաշխում էին իրանց կալւածքները վանքերին կամ եկեղեցիներին, կամ վաճառում էին նրանց։ Մանաւանդ XIII դարում ազնւականների կալւածքների մեծ մասը անցաւ հոգեւորականութեան ձեռքը։ 2) Երկրորդ տեղը բռնում էին «Աստուծոյ տան մարդիկ», այն է վանքապատկան կամ եկեղեցապատկան ճորտերը։ Բայց ժամանակի ընթացքում, ինչպէս վերևում ասեցի, նրանց թիւը շատանում էր։

բ) Ազատները (freie) մինչև ֆէօդալականութեան տարածւելը կազմում էին բնակիչների գլխաւոր տարրը։ Հին գերմանացոց կեանքում նրանց անւանում էին «հասարակ» կամ «առհասարակ», «ազատ»։ Շվէյցարիայում «ազատներին» անւանում էին «ihreigen», որ նշանակում է «իր սեպհական», կամ, ինչպէս մեզանում ժողովուրդն է ասում, «իր տէր», «իրա տէր» և «իր գլխի տէր»։ Նրանք ճորտութիւնից ազատ էին և նըստած էին իրանց սեպհական հողի վրայ։ Այդ «իրա տէր» ազատների թիւը աւելի շատ էր Ուրիում և մանաւանդ Շէխէ գետի ձորում, որովհետև այնտեղ զառիվայրերի վրայ ցիրուցան եղած հողի կտորները կարելի է ասել ստեղծած են նրանց սեպհական տէրերի ձեռքով։ Նրանք մաքրում էին և մինչև այսօր էլ մաքրում են այդ «կտորները» անտառներից, ինչպէս մեր երկրում «քարից» և «քօլից» մաքրած հողի մասին ժողովուրդը ասում է «ես արին քրտինքով» մաքրել եմ հողը», նոյնպէս և հին Շվէյցարիայում այդ ձեւով մաքրած սեպհականութեան մասին դեռ միջին դարերում ասում էին. «իմ սեպհականութիւնը անձնական աշխատութեամբ անմշակ (վայրենի) անտառից արմատահանեցի», այսինքն անտառը արմատախիլ արեցի իմ սեպհական աշխատանքով իմ հողի վրայից (Proprietatem meam labore meo de silvis incultis extirpai)։ Աշխատանքը, ինչպէս դեռ 17 դարի վերջում (1689) ապացուցանում էր Լօկկը, սեպհականութեան ստեղծողն է։

Ազատութիւնը ի բնէ անտի այնքան յատկանիշ էր գերմանացոց ազգային բնաւորութեանը և ոգուն, որ Շվէյցարիայում խորթ երևոյթ չէ թւում, երբ «թագաւորի կշտին» (մօտը), ինչպէս ասում է պրօֆեսսօր «էքսլին (Öchsli), ազատ հողի վրայ նստած էր «իրա տէր» կամ ազատ գիւղացին։ Ազատների թիւը կամաց կամաց շատանում էր հետևեալ կերպով. 1) ճորտերին ազնւականները տալիս էին ազատութիւն ու նրանց հողը կամ դառնում էր նրանց սեպհականութիւն, կամ հողատէր ազնւականը (և այդ քիչ էր պատահում) բաւականանում էր փոքր տուրքով, և այդ համարւում էր այն հողի գինը, որը ազնւականից անցնում էր գիւղացու ձեռքը. 2) Նոյն եղանակով, բայց աւելի մեծ քանակութեամբ վանքերից և եկեղեցիներից ազատութիւն ստանում էին «Աստուծոյ տան մարդիկ», այսինքն վանքապատկան կամ եկեղեցապատկան ճորտերը։ Ժամանակի ընթացքում տուրքերի վճարումն էլ դադարում էր, որովհետև գիւղացիք միանւագ վճարում էին որոշ դրամ, որը փոխարինում էր տուրքերը։

Այս տեսակ տնտեսական ազատութեան ընթացքը առանձնապէս աչքի էր ընկնում XIII դարում։ Ազատ հողատիրութիւնը դառնում էր ընդհանուր կանոն, իսկ ճորտութիւնը կամ նրա փոխարէն դրամական տուրքի վճարումն բացառութիւն։ Այսպէս գոյացաւ այն ազատասէր դասակարգը, որը ձգտում էր և քաղաքական ազատութեան։

Պրօֆ. Սօլօմոն Նիհազարեան

(Կը շարունակւի)

---

*) Մինչև այսօր էլ անտառից մաքրելը շվէյցարացիները անւանում են «շւանդեն» կամ «շւէնդեն»։ Իսկ անտառով ծածկւած փոքր հողի կտորները անւանում են «շէխէ» (schäche), նրանց անունից և գեան է ստացել «Շէխէ» անունը։

Պատմութիւնը շարունակ կրկնւում է միայն նորանոր վարիանտներով

Նէէր Բէյլիսի հակառակորդներին

ԲԱՐԵՓԱՌ ՀԱՅՐԵՐԻ ՁԱՐԱՓԱՌ ՈՐԴԻՆԵՐ

Աղքատ լինիլ անձնական սեփական արժանիքներով և մեծաբարբառ պարծիլ նախնիների վիճակը։

Եկիլ, ասես, այն օրն ենք հասել, որ եթէ մեր լեզուն պոռոյտ չգար՝ ագռաւները մեր աչքը կը հանէին։

Ուստի որոտալից գոչում ենք 1500-եակը մեր գրերի գիւտի և 400-եակը մեր տպագրի։

Եւ սակայն ինչ։

Լեռներ չենք շարժիլ, վէմեր չենք կոտրել՝ ապարանքներ կառուցանելու, այլ ապարանքներ ենք արհամարհում, ապարանքներ փլուցանում՝ չգիտենք նոր ինչ շինելու։

Երբ գրի գիւտն արին, մեր նախնիք մեզ գրականութեան մի ոսկեդար տուին, որ և այսօր, մեր այս անկածութեան, մեր խեղճութեան մէջ մեր երեսը ճերմակ է անում օտարի աչքում և մեզ համար յարգ վաստակում։

Թուեցէք ժամանակն և թիւն առէք այն քաջերի, որոնք այն ոսկեդարը կազմեցին։ Հինգհարիւրդ դար ենք ասում, մի հարիւրեակ, և այն ոչ լրիւ. և գրական աստղերի մի հրաշապայծառ բոյլ, մի այնպիսի կուռ ու կորովի լեզուով, մի այնպիսի ոլորուն ոճով, մի այնպիսի ճկունութեամբ, և ճոխ և քաջահնչիւն այնպիսի, որ արդարև զարմանալի։ Եւ այդ լեզուն, և այդ լեզուի սքանչելի արուեստաւորները այնքան ընդունակ հանդիսացան, որ ամենակիրթ ազգերի վսեմ երկերը վսեմապէս հայերէնի փոխարկել կարողացան։

Իսկ մենք ինչ, Արովեանից մինչև այսօր։

Ասես մենք էլ ենք շինող։ Նախնաշէն ապարանքը փլցրինք, և ահա շինում ենք։ Ինչ. մենք էլ չգիտենք։ Ով վաղ է զարթնում և յաւակնոտ է և համարձակ է և յանդուգն, նա օրուայ ճարտարապետն է. նա մեր լեզուն այսպէս կը շինէ և այսպէս կուղղագրէ։ Միւս օրը մի ուրիշն աւելի վաղ է զարթնում, և ահա ոճը փոխուեց և քարերն այլ կերպ են տաշւում։ Եւ այսպէս անվերջ։ Մի Բաբելոն և բազում Բելոսներ։ Բոլորն էլ ուզում են աստուածանալ։ Մեծն Մեսրոպ բոլորի քունը կտրել է։

Այսօր տեսից վեր կացողը, գրիչ ձեռք առնողը Մաշթոց է. և նա մաստում է ու մաստում իր գրիչը հայ լեզուի գլխին, և դորանից է որ հայ լեզուն կընտացել է, մերկացել իր արդուզարդից, և արի հիմա և մի դասական երկ հայերէնի վերածէ։ Ինչ քերականութեամբ, ինչ ոճով, ինչ ուղղագրութեամբ, և ինչ բառերով ու շարադասութեամբ՝ որ քննադատները քեզ չքլքրեն, և արդէն շվոթուած ընթերցողը հաւանի կարդալ վաստակդ։

Շնորհիւ այդպիսի մի խառնակութեան՝ քմքերն աղճատուել են չարաչար, և՝ ցաւ ցաւի վրայ՝ մինչև անգամ լեզուի մէջ էլ է մտել կուսակցութիւնը. նայելով թէ քաղաքական որ կուսակցութեան է պատկանում գրողը կամ ընթերցողը, նորա էլ ուղղագրութիւնն ու լեզուաշինութիւնն է ընդունում։ Ուսումնասիրութիւն, առողջամտութիւն, տրամաբանութիւն, ճշմարտութիւն, իսկութիւն բան չունին այդտեղ։ Անուն արմատից անուանելի-ն պիտի գրուի անւանելի, անվանելի, նայելով թէ ով ես դու, Պօղոսեան ես թէ Ապօղոսեան։ Իսկ հնադարեան Մեսրոպի հարազատը թող լսէ. որովհետև նորա ուղղագրութիւնը հակամանկավարժական է, այսինքն երեխան դժուարանում է անուանելին այնպէս հեշտութեամբ կարդալ, որպէս անւանելին կամ անվանելին։

Այդպէս Սահակ-Մեսրոպին տօնելու ելածները վերիվայր են շրջում նոցա ուղղագրութիւնը և իբր մանկավարժօրէն հեշտացնում էն՝ անուանելին անւանելի կամ անվանելի գրելու վարդապետութեամբ. և արդէն զգացւում և շօշափւում էլ է, որ վաղն էլ մի անխուսափելի հետևաբանութեամբ կանոնադրելու են ծովը, զովը, գովը, կովը գրել ծօր, զօր, գօր, կօր, ըստ որում ո տառը այդտեղ օ ձայնն է հանում, վ տառն էլ իսկ այդտեղ ւ տառի տեղն է նստած, ուստի և վանել պէտք է այն. իսկ օ-ի կողքին ւ-ը յետագաս՝ վ կարդալ, պահելով ու երկդիր ձայնը, որպէս ռուսական у արտասանութեամբ, կըկու, ձու. տու և այլ բառերի համար։ Դեռ թողնում եմ մէջ բերել միւս տառերի համար առաջարկուած յեղաշրջումներն ու յապաւումները։ Եւ այդ բոլորը անում են, առաջարկում են ընդհանրական ընդունելութեան, իբր հեշտացնելու համար ընթերցումը մանուկներին, որոնք այսուհետև առանց ծաւալու էլ կարենան կուլ տալ արդի գրականութեան խորտիկները։

Ու դուք, բարեփառ հայրեր Սահակ-Մեսրոպ, ու ձեր ոսկեգրիչ աշակերտների բոյլը՝ ձեր 1500-ամեակովը, երթաք բարեաւ մեր ուղեձեռների, ճառերի, ծափերի ու խրախական բացագանչութիւնների ուղեկցութեամբ։ Մեր մանուկներն այսօր, և վաղուայ հասակաւորուած հայը այսուհետև, անջատուած կրմնան ձեզանից, ձեր ոսկեղենիկ ոսկետառ գրուածքներից, որոնց ընթերցանութեան համար եթէ երբէք կամք ունենան, նորից պիտի ձեր ուղղագրութիւնը ուսանելու հարկի տակ լինեն, որպէսզի կարդալ կարողանան ձեր սքանչելի, ոգեշունչ երկերը, եթէ միայն այդ երկերը, մի նոր անյաղթելի հետևաբանութեամբ, մաժուլի տակից նորածին ուղղագրութեամբ ի լոյս չընծայուեն։

Երթաք բարեաւ։ Մենք, ձեր չարափառ որդիքը, սովոր ենք յուզարկաւորութիւն սգով ու շքով անելու. բայց այսօր մենք սուգը թողած, իսկ դուք խրախականով պճնազարդած, ձեր 1500-ամեակին ձեզ յուղարկաւոր ենք հանդիսանում աշխարհախումբ ժողովով ի հանգիստ յաւիտենական։

Երթաք բարեաւ և՛ դուք և՛ ձեր գիր-ուղղագրութիւնը։ Թող մեր այս տեսակի երախտագրութիւնը իր տարակերպ և չափազանցական արտայայտութեամբ չքստմնեցնէ ձեր նշխարները մայր երկրի ծոցում և ձեր ոգիները տիեզերական անեզրութեան մէջ։

Դուք էլ, երբ ոսկեդարն էիք կազմում վերևում, տեսաք յատակում մրուրի յուզուելը՝ որը պիտի բարձրանար խափանելու արևային ակնապարար ոսկեշողքը։ Եւ ահա դարերի այդ խորքից, գերեզմաններից ծոցից դեռ ևս լսւում է յետիններից մէկի այս գանգատաւոր և միևնոյն ժամանակ յանդիմանական ձայնը —ով կարճեցրէ ղյանդգնութիւնն ընդդէմ առողջ վարդապետութեանն հակառակ յարուցելոցն, որք ամենայն բանիւք քակտելք և քայքայելք՝ յոլովս փոփոխեն վարդապետս և բազում դիրս։ ... Ո՞վ գնոսա ըմբերոշնասցէ... և չափ գնէ բանի և լռութեան։

Յուսամ արդեօք թէ այդ հարցումներին գոհացում կը տայ մեծ տօնախմբութեան առիթով էջմիածնում ուղղագրութեան խնդրի մասին ի խորհրդակցութիւն գումարուելի ժողովը։

Կը ցանկայի հաւատացողներից լինել և յուսալը մոքովը տանելուս համար չկարմրել։

Բայց ախ. արդէն ղգում եմ վստահելով յիշեալ գանգատաւորի դարձուածը գործ ածել — «ղծիծաղելն

ղմեռք և զարհամարհելն իբրև զանհաստատունով»։ Վասնզի պողպատէ ջլեր ունեցողների և երկաթ ծամողների համար թէև նշանակութիւն կարող են ունենալ ցաւի ու տրտունջի ձայնները, որ մեզնէն նրբաթելերի կազմութիւն ունեցողները արձակում են դարերի թանգ յիշատակներն և փառահեղ կոթողները վանդալօրէն կործանուած ու կոխոտուած տեսնելիս։ Ցաւոտ նախապաշարումների և հնաոսիրութեան ապիկար արտայայտութիւններ են ժամանակիս երկաթէ ձու ածողների համար միամիտների այդ քքուական ձայները։

Պարզել տօնախմբին մի բանով և աղաւաղել նոյն այդ տօնախմբելին, ահա ցաւոտ երևոյթը։

Ա. Մ. Եզեկեան

ԳՐՉԻ ՓՇՐԱՆՔՆԵՐԻՑ

ԴՐՕՇԱԿԱԿԻՐԸ

Երբ նա գնում էր առաջնորդելու ամբոխին, սիրունին, ճանապարհ ձգելով նրան, նկատեց իր ձեռքով ասեղնագործած կարմիր դրօշակը, որը նա խոստացաւ կրկին վերադարձնել նրան յաղթութիւնից յետոյ, ասելով, որ մահը միայն կարող է խլել այդ դրօշակը նրա ձեռքից։

Եւ նա ոգևորւած գնաց կռւելու «իրաւունքի և արդարութեան» յաղթանակի համար, թէև գիտէր, որ թշնամին անհամեմատ աւելի զօրեղ էր...

Սակայն բախտը, յիրաւի, չէր ժպտաց նրան։ Նրա խումբը ցիր ու ցան եղաւ։ Գնդակը ծանր վիրաւորեց նրան գլխից, և նա ուշագնաց՝ ձեռքից թողեց թանգագին դրօշակը, որը կորաւ ամբոխի իրարանցման մէջ...

Իսկ յետոյ, երբ նա ուշքի եկաւ հիւանդանոցում, կարմիր դրօշակի փոխարէն իր սիրուհուն ուղարկեց իր գլխի սպիտակ փաթաթանը, որ բոլորովին կարմիր էր ներկուել նրա արիւնից...

Լէօնիդ

* * *

Զարթնակաւղկաչ քո մոմունջ լեզուով
Մաշում ես սրտիս ափերը դալար.
Ինչպէս կենսաբոյր մեղմ զեփիւռը հով
Շոյում ես երգով սիրտս սիրահար...

Դու ինձ կանչում ես քոյրերով ծաղկանց
Աստղերի շողով ժպտում ես յուզած.
Հոգուս ջահերը վառւում են անանց,
Սիրում ես շղարշ ծիածան հագած...

Ոսկի օղակով ինձ քեզ ես կապել,
Բայց դու հեռու ես ինձնից աստղի պէս...
Հոգուս ծովակն ես չքնաղ երանգել
Անմահ արեւի շքեղ այգի պէս...

Ց. Խանդարեանց

ԱՆՏՕՆ ՓՈՒՐՑԵԼԱՁԷ

Ծն. 1838 Մերէթի † 5 նոյեմբ. 1913.

Վրաց ականաւոր գրականագէտ և հասարակական գործիչ վաթսունական թւականների տենչերով տոգորւած պատանեկական հասակից սկսած մինչև վերջին տարիները մասնակից, ուղեցոյց, նախաձեռնող վրաց գրական, կուլտուրական ընկերութիւնների և հաստատութիւնների, Անտօն Փուրցելաձէն վախճանւեց իր հայրենի գիւղում 75-ամեայ հասակում։

Հանգուցեալը երկար տարիներ աշխատակցել է վրաց թերթերին, ունի մի շարք պատմական և այլ վէպեր, պատմւածքներ։ Հիմնադիրներից մէկն է վրաց դրամատիկ., գրագիտութիւն տարածող ընկերութիւնների, Ազնւականների բանկի և գիմնազիայի։ Ուսումն ստացել էր Ռուսաստանի դինւորական ուսումնարանում և պետական ծառայութիւնը թողնելով անցել է ապա հասարակական գործունէութեան։ Իշխան Իլիա Ճաւճաւաձէի մահից յետոյ ընտրւել է նրա տեղը Ազնւ. բանկի կառավարիչ։

Մարմինը իր ցանկութեան համաձայն ամփոփւել է իր հայրենի գիւղում և դագաղին չէ դրւել ոչ մի պսակ, չէ արտասանւել ոչ մի դամբանական։

Յարգանք իր հայրենիքի բարգաւաճման, լուսաւորութեան և փառքին անխոնջ ծառայած Վրաստանի հարազատ զաւակ Անտօն Փուրցելաձէի յիշատակին։

ԳԷՈՐԳ ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆ

Նոյեմբերի 7-ին սև հողին յանձնւեց ուսուցիչ և գրական գործիչ Գրիգոր Շահբուդաղեան, դեռ այն հասակում, որ մի տասնևհինգ տարի էլ կարող էր օգտակար լինել թէ հայ դպրոցին և թէ հայ գրականութեան։

Նախորդ դարու վերջին երկու տասնեակ տարիներում յայտնի է իբրև լաւ թարգմանիչ, իբրև Վարժարան ամսագրի խմբագրութեան և նախկին Թիֆ. Հ. Հրատ. Ընկ. քարտուղար, ինչպէս և կ. Հ. Բ. Ը. ընդհանուր մի շարք ժողովների քարտուղար, Ներս. ուսումն. հայոց լեզւի ուսուցիչ։ Գրիգոր Շահբուդաղեանը նոյնպէս մեց լքած և արհամարհած XX-րդ դարու նորածիլ դեկավար գործիչներից, և նա հարկադրւած անցնելով մանաւոր գործերի, աջողութիւն չունեցաւ նոր ասպարէզում ու զրկանքներով խնայած կոպէկներն էլ քամուն տալով, վախճանւեց, թողնելով ընտանիքին աննպաստով։

Յուղարկաւորութիւնն ու թաղումը, ինչպէս վայել է, չը կատարւեց պատշաճ։ Բացակայ էին շատ շատերը նախկին պաշտօնակիցներից և հայկական ընկ. ոչնո՛ չը կար։

ՀԱՐՐԻ ՖԼԻՍ ԲԼՈՍ ԼԻՆՂ

Ներկայ նոյեմբերի 13-ին Լոնդոնում վախճանւեց և թաղւեց Հայաստան պատկերազարդ հրատարակութեան հեղինակ նշանաւոր ճանապարհորդ Լինչը, որ անգլիական հեռագրական Րէյտերի ընկ. նման մի հաստատութեան տէրերից և դեկավարներից մէկն էր։ Լինչի Հայաստանը Փիթոյև ընկ. հրատարակութեամբ լոյս է տեսել ռուերէն. հայերէն համառօտ թարգմանել է պ. Տօնապետեան։ Մեզ շատ տարիներ առաջ պատրաստակամութիւն էր յայտնւած Լինչի կողմից օգտւել իր կլիշէներով, եթէ հայերէն հրատարակէինք այդ աշխատութիւնը։ Սակայն մենք ձեռնամուխ չեղանք այդ գործին որոշ պերեսպեկտիւներով։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Սահեր ակների և դիակների երկրպագու հայը մեծ հանդիսաւորութեամբ թաղեց հայկական ասպարէզի վրա գործող երեք խոշոր, կենսալից մարդ, որոնցից իւրաքանչիւրը առնւազը դեռ մի տասը տարի կարող կը լինէր նոյն թափով գործելու, աւելի և աւելի հմտութիւն ու փորձառութիւն ունենալով։

Այսօր ոչ ժամանակն է և ոչ տեղը յիշողութիւնները տպագրելու սրանց մասին։ Բայց լռութեան չըլսել հայկական այլանդակ բարքերը, այդ պահանջում է և տխուր առիթը։

Դաշնակցականութեան, երբեմն զաղափարական դաշնակցական կուսակցութեան սիւն ու հիմնադիրներից մէկը Մ. Զաւարեան կենդանութեան ժամանակ վերջին տարիներս հալածւում էր իր հիմնած կուսակցութեան նորագոյն լիդէրներից, որովհետև վերջին տարիներս նա համամիտ չէր իւրայիններէ գործակերպի հետ։ Եւ այդ գաղտնիք չէ 'իհարկէ, և ոչ էլ ենթադրութիւն։ Մանանշենք դէթ այն լորբոքած դայրոյթը, որ ժրնևում Զաւարեանը բարձրաձայն արտայայտել էր Իսահակ Ժամհարեանի սպանութեան առիթով և պահանջում էր նման սպանութիւններին վերջ տալ...

* * *

Բագւայ Հ. Կուլտ. Միութեան հիմնադիր և նախագահ Կ. Յատիսեան կենդանութեան ժամանակ աղաղակում, փոթորկւում էր, մի 15—20 հազար րուբլի ուզում համայն հայութիւնից Ա. Արովհանի արձանը վուրթով կանգնացնելու համար։ Բայց հայութիւնը ղլացաւ նրան այդ տալու ու խոյս էր տալիս նրանից, հեռը հանդիպելը «խաթա» համարելով...

* * *

Ալ. Քալանթար իր գիշեր-ցերեկ անխոնջ աշխատանքով, անդադրում կենցաղով ամենքի աչքի առաջն էր։ Բայց ոչոք չէր կամենում ինքն իրան հարց տալ և ըստ այնմ էլ բաւարարել պատասխանը, թէ օրական 24 ժամ անընդհատ այստեղ, այնտեղ, վազվզող, խօսող, գրող, գործող Ալ Քալանթարը երբ է հանգստանում, ուր է հանգստանում և ինչպէս է ապրում։

Իսկ այսօր, երբ անակնկալ երեք դիակ հայութեան առաջ միանգամից հրապարակ եկան, նա ցնցւեց ու իբրև թէ պատրաստակամութիւն յայտնեց քսակն էլ լայն բանալու։

Թողէք մեռելներին հանգիստ։

Եւ եթէ չը պիտէք թէ դեռ կենդանի ճնշացածներ էլ կան, որոնց նոյնպէս ոչ պակաս կոկորդիլոսի արցունքների հեա հարբւրաւոր ցաւակցական հեռագիրներ պիտի խփէք թերթերին և չքմեղ հանդիսանաք, նորից յիշեցնում ենք ձեզ, հայեր,

Յիշեցէք, որ կայ ծերացած, ուժասպառ, լքեալ մի հայ հրապարակախօս, պանդխտութեան մէջ կիսաքաղց, կիսամերկ, անապաստարան։ Մի հայ հրապարակախօս, որի դրօշակի տակ շատ արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, քահանաներ և ժողովուրդ են եղել պատսպարւած, իսկ այսօր ապերախտ, չքմեղ է ձևանում հայութեան այդ մասը։

Հարկւայ անունն էլ յիշելու։ Բայց ասենք և անունը, և եթէ հայը նամուս ունի, եթէ հայը խղճմտանք ունի, թող լսի և այդ անունը՝

Սպաղդար Սպաղդարեան

Սթափւեցէք, հայ ինտելլիգենտ տարրեր, դուք ունեցէք, հայ հոգևորականներ, փրկեցէք ձեր աշխատաւոր հիւանդ ու լքեալին։

* * *

Երկրիս փոխարքան իր ծանր հիւանդութիւնից ապաքինւած վերադարձաւ Թիֆլիս և քաղաքը մեծ շուքով դիմաւորեց իր փոխարքային։ Ընդունելութեան ժամանակ արտասանւած սրտաբուղխ ճառերը զանազան մեկնութիւններով են տպագրել թերթերը։ „Рус. Сл.“ հայաղն իշխան Գ. Մ. Թումանովին վրացի է անւանել։ Վրացիք զայրացել են և բացէբաց հրաժարւում իշխան Գ. Մ. Թումանովին վրաց մտքի ներկայացուցիչ համարելու և պահանջում են, որ նա հրապարակաւ յայտարարէ իր զուտարիւն հայ-լուսաւորչական լինելը և ս. Էջմիածնայ միւռոնով դրօշմած լինելը։ Իսկ իշխան Գ. Մ. Թումանովը էլ լռում է և չէ բաւարարում վրացիներին։ Մ'ԹԷ տեղին չէր լինել, եթէ բանաստեղծի խոսքերով պատասխանէր վրացիներին, թէ՝

Մի'թէ նա է հայը, որ ուտում է տոլմա, հարիսա etc. etc. etc...

Ո'չ, այլ հայը նա է, ով ծառայում է հայութեան՝ հրատարակում է հայերէն լրագիր, հիմնում է հայոց Դրամատիկ. Ընկ., հայոց մէջ գրագիտութեան տարածող ընկ., խօսում է հայերէն, մասնակցում հայոց բարեգործ, կուլտուր., կրթական հաստատութիւններին իբրև խորհրդի անդամ, հոգաբարձու և այլն։ Իսկ իշխան Գ. Մ. Թումանով երբեք չէ երևացել հայկական այս ասպարէզներում իբրև հայ, այլ սկզբից էլ միշտ երեւացել է վրացիների մէջ եւ նոյնիսկ խթան եղել նրանց սթափման ու ներկայացուցիչ-ղեկավար վրաց մտքի ու տենչանքների, հիմնադիր վրաց կուլտուրական հաստատութիւնների։

* * *

Ալ. Քալանթարի յիշատակը յաւերժացնելու համար Թաղման կարգադիր յանձնաժողովը յանգել է այն որոշման, որ սեպհական մի տուն գնւի Ալէքսանդր Քալանթարի անունով, ուր գետեղւի Մշակի խմբագրութիւնը իր գրադարանով, Հ. Գիւղատնտեսական ու Տնայնագործ. Ընկ իր մուզէով։ Լիուլի համակրելով այդ որոշման, մենք պատրաստ ենք համարում, որ այդ տունն էլ լինի հէնց Ալ. Քալանթարի սեպհական տունը, ուր նա ապրել է և այնքան-այնքան գառն ու սրտաժպտ գիշերներ լուսացրել իր գրասեղանի առաջ։

* * *

Համազգային Մեծ Յորելեանի տօնախմբութիւնը կատարւել է ամենուրեք, ուր կայ հայ։ Փառահեղ են եղել մանաւանդ Վենետիկ, Պարիզ։ Տարազի հետևեալ №-ում ընդարձակ տեղ կը բռնեն այդ յորելեանի շուրջ մի քանի նկարագրութիւնների հետ և մի քանի անհրաժեշտ որոշումներ ու ցուցմունքներ։ Այդ №-ում կը տպագրւեն և այն ճառերը, որ մեր գիտնական հայրերը Վեհ. Կաթուղիկոսի յարեհաճ թոյլտւութեամբ Թիֆլիս գալով մեզ հիւր Գրական-Գեղագիտական Մասնում պերճօրէն դասախօսելով ու ճառերով հմայեցին հայ և օտարազգի մեր բազմաթիւ հիւրերին։

* * *

Վանի Երամեան նշանաւոր դպրոցի հիմնադիր պ. Երամեանը Թիֆլիսումն է այժմ։ Վաստակաւոր ուսուցիչը, որի դպրոցում 400 աշակերտներ են սովորում, մտադիր է ընդհիշտ նիւթապէս ապահովել այդ դպրոցը։ Թիֆլիսում յատուկ այս նպատակի համար արդէն կազմւել է մի յանձնաժողով, որը դիմումներ պիտի անէ թէ քաղաքումս և թէ Ռուսաստանի հայաբնակ մի քանի կենտրոններին։

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ՔՐՈՆԻԿՈՆ

Ձմեռային սեզօնը Թիֆլիսում առայժմ անցնում է սառը։ Օպերան չի համակում Թիֆլիսցիներին, չը նայած որ խմբին աւելացաւ և Սարանչևան։ Օպերայի դեկավարները հարկադրւած այժմ էլ հրաւիրել են նշանաւոր տենոր երիտասարդ Սմիրնովին, գաստրոլային ևրեք ներկայացման համար։ Իհարկէ, պ. Սմիրնով այդ երեք ներկայացումներին էլ կը գրաւէ մեծ բազմութիւն, իսկ յետոյ... Յետոյն էլ այն կը լինի, որ կը հրաւիրուեն մինչև ծննդեան տօները նոր գաստրոլեաներ, կամ թէ ներկայացումները կը շարունակուեն կիսադատարկ թատրոնում։



Վ ե ր դ ի

Ծն. 100-ամեակի առիթով

Զայկովսկու մահուան քսանամեակը օպերան յիշատակեց հակագեղագիտական մի ներկայացումով։ Եւր. Օնեգին եր գեցին խմբի համարեա բոլոր երգիչները, դերերը շարունակ փոփոխելով։ Իսկ Վերդու ծննդեան հարիւրամեակի համար դեռ պատրաստւում է Արք. օպերային թատրոնը։

Շարունակւում են Արտիստ. Ընկ. թատրոնում Зарѣчный-ի դրամատիկ. խմբի ներկայացումները նոյնպէս մի քանի աջողութեամբ։ Արցիբաշևի Յանդ պիէսը տալիս է մուտք։ Կլասիկների ստեղծագործութիւնները այժմ տրւում են յատկապէս աշակերտների համար ամէն և կիրակի օրերը կերեկով։

Հայոց Դրամատիկ. Ընկ. խումբը Արտիստ. Ընկ. և Զուբալովի թատրոններումն է տալիս իր ներկայացումները։ Ուշագրաւ նորութիւնը պ. Սևումեանի Թարգմ., բեմիսօրութեամբ և մասնակցութեամբ Ֆաուստը հայ բեմ հանելն է։ Թամաշչի ժողովուրդը մի երեկոյի մէջ 18 պատկեր, հետն էլ պար ու երաժշտութիւն տեսնելու, լսելու համար լցրել էր թատրոնը, իսկ երկրորդ անգամ նոյն Ֆաուստը եկամուտ չի տւել դրամարկղին։

Մենք ողջունում ենք հայոց թատրոնի ղեկավարների ձգտումը՝ ժողովրդին ծանօթացնել տիեզերական հանճարների ստեղծագործութիւնների հետ և կը ծափահարէինք այդ ձգտումը, եթէ թատրոնի ղեկավարները յամառ կերպով, սիստեմատիկ, առանց աչ ու ձախ նայելու իրանց տեղնջանքը պատւաստէին թատրոն յաճախողների։ Բայց քանի որ այդ ներկայ պայմաններում անկարելի է, ուրեմն առժամանակ պէտք է և բոլորովին բեմ չը հանել նման մեծ երկեր։

Խմբի մէջ կ. Պօլսից հրաւիրւած դերասան պ. Փափազեանը, որին ընութիւնը պարգևել է ձիրք, յոյս է տալիս, որ ընտելանալով մեր երկրի պահանջներին, կարող պիտի լինի դափնիներ վաստակելու։ Տ. Սիրանոյշ, արդէն թագուպատակ հայ բեմի, այս տարւանից դարձեալ Թիֆլիսի խմբի մէջն է, սակայն այս սեզօնին խմբի մէջ չէ մեր թատրոնի փայլուն ոյժ տ. Մայսուրեանը։ Մենք մանրամասնութիւնների մէջ չենք մտնում և չենք պարսաւում ոչոքի այդ շատ զգալի բացի համար։ Բայց ցաւում, կսկծում ենք, որ հնարաւոր է լինում մեր օրերում տ. Մայսուրեանի նման գործչին թողնել պարապ։

Խմբի մէջ չէ այս տարի և Աբէլեանը։ Սա կազմել է մի տուրնէ առայժմ Պարսկաստանում և օրերս Շահի պալատում ներկայացում է տւել, որ անցել է շատ մեծ շուքով։ Դրւատւել են մեր դերասանները և արժանացել թէ Շահի և թէ նրա վազիր ու. նազիրի ուշադրութեան, պարգև ստանալով շքանշաններ և այլ թանգագին ընծաներ՝ քիրմա շալեր, գոհարեղէն ու գորգեր։

— Կարա-Դերվիշի թարգմանութեամբ Շանթի *Հին Աստւածները* Զարէչնիի ռուս դրամատիկ. խումբը պատրաստւում է ներկայացնել։ Ինչպէս մեղ տեղեկացնում են իշխանուհու դերի համար յատկապէս հրաւիրւում է տ. Մայսուրեանը։ Եւ եթէ մեր տաղանդաւոր դերասանուհին, ինչպէս լսւում է, վերջնականապէս անցնում է ռուս բեմին, այդ մենք կը համարենք ոճիր և անները լի քայլ թէ տ. Մայսուրեանի կողմից և թէ մանաւանդ հայ դրամատիկական Ընկերութեան, որ անգործ թողնելով տ. Մայսուրեանի պէս հմուտ և տաղանդաւոր դերասանուհուն, խթան է լինում նրան ռուս բեմ բարձրանալուն։



Ի. Պ. Զայկովսկի

Մահուան 20-ամեակի առիթով

ԳՐԱՄԱՏՈՒՐԳ ՆԱԶԱՐԵԹ-ԲԵԿ ՎԷՋԻՐՕՎԻ XL-ԱՄԵԱԿԸ

Նոյեմբերի 15-ին Բագւում Թաղիևի թատրոնում Սաւիա կրթական ընկ. նախաձեռնութեամբ տօնել են դրամատուրգ և հրապարակախօս Նաջաֆ-բէկ Վէզիրո-

վի 40-ամեայ գրական-թատրոնական գործունէութեան յոբելեանը։

Յոբելեարը ղարաբաղցի է. ծնուել է Շուշում 1854 թ. և սովորել նախ տեղական մզկիթին կից ուսումնարանում, յետոյ քաղաքային դպրոցում։ 1868 թ. տեղափոխւում է Բագու, մտնում այնտեղի ըէալական ուսումնարանը և վեց տարուց յետոյ աւարտում արծաթի մեդալով։

Դեռ ըէալական ուսումնարանի 6-րդ դասատան աշակերտ Վէզիրովը Բագւում առաջին անգամ զնում է ռուսաց թատրոն և հմայւում բեմով։ Ահա այս ժամանակից էլ հետաքրքրւում է թատրոնով, ծանօթանում թուրք դրամատուրգ Ախունդովի պիէսների հետ, կազմում խումբ և Բագւում ներկայացումներ տալիս։ Ցաճախում են ոչ միայն թուրքերը, այլև հայերը։

Բարձրագոյն դպրոց է կամենում մտնել Պետերբուրգում, բայց այստեղ հիւանդանալով, գալիս է Մոսկւա և մտնում Պետրովսկի ակադեմիան։ Դեռ ուսանող, աշխատակցելիս է եղել թուրքերէն լեզւով հրատարակւող անդրանիկ Իքդինջի լրագրին,

Աւարտելով ուսումը. նշանակւում է Դիլիժանում անտառապետ, բայց 1895 թ. պետական ծառայութիւնը թողնելով գալիս է նորից Բագու, պարապում փաստաբանութեամբ և ապա ընտրւում քաղաք. վարչ. քարտուղար։ Այս ժամանակներումն էլ ահա սկսում է Նալբանդ-բէկը գրել թէ պիէսներ և թէ այլ յօդւածներ, պատկերներ։

Յոբելեարը Կովկասում թուրքաց բեմի հիմնադիրներից մէկն է։ Գրիչը սահուն է ու գեղեցիկ արտայայտութիւններ ունի։ Յարգանք, արհեստութիւն և շնորհաւորութիւններ յոբելեարին, մեր բեղմնաւոր հայրենակցին։

ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

(1879—1881)

(Սկիզբը 1912 թ. Տարազ № 11)

Ա

Աստուած իմ, Աստուած։ Հիմա, այս տողերը գրելիս, երբ աչքի եմ անցկացնում նրա ինձ գրած մի շարք նամակները, ես զարմանում եմ, թէ ինչպէս տողերի մէջ ես չէի նկատում և չը գուշակեցի, թէ ինչ զարհուրելի հարւածներ պիտի հասցնէ այդ մարդը Թիֆլիսի խեղճ նորածին հայ թատրոնական բեմին։

Ինչ է, որ յափշտակւեցի ես, այլ և յափշտակեցրի և աւերողջ մասնաժողովի անդամներին, որոնց ես հաւատացրի, թէ Ադամեանը մեզ համար անգնահատելի գիւտ է։

* * *

Միմեանց հետ մեր ունեցած նամակագրութիւնից որոշւեց, որ նա կը ստանայ վարձատրութիւն ամսական 80 րուբլի և մէկ բենեֆիս, իսկ դերասանուհիքը մէկը 100 րուբլի, և միւսը 60-ից մինչև 80 ր. մէկ-մէկ բենեֆիսով։

Նախ դերասանուհիներից նա առաջարկեց ինձ հրաւիրել մի օրիորդ Քալենթարեան ազգանունով, որի և համաձայնութեան մէկ ստորագրութիւնն ուղարկեց, յետոյ մի շարք ուրիշ դերասանուհիներ, ի միջի այլոց և այսպէս անւանւած Աստղիկ քոյրերին։

Ցետոյ յանկարծ մէկ նամակով նա ինձ յայտնեց, որ իմ ցանկացած համեստ և քարոյական դերասանուհի գտնելը շատ դժւար է, ուստի և առաջարկում էր ինձ Ադամեանը գալ միայնակ Թիֆլիս և այստեղ արդէն պատրաստել դերասանուհիք տեղականներից։

Այդ նամակից յետոյ ստացայ և հրաժարական մի տոմսակ օրիորդ Քալենթարեանից O, sancta simplicita՝ բան չը հասկացայ, վճռեցի շտապել Պոլիս։

Թիֆլիսից մինչեւ Պոլիս

Մասնաժողովի պաշտօնական յանձնարարութիւնը) ստանալուց յետոյ, որով ինձ երաշխաւորում էին վարձել ըստ իմ բարեհաճութեան մէկ դերասան և երկու դերասանուհի, ոչ առաւել քան 100 րուբլի ամսական ռոճիկով, ես յունիսի 20-ին ընտանիքս երկու մատաղահաս երեխաներովս ուղարկելով Մանգլիս ամառանոցը, նոյն ամսի 29-ին ճանապարհ ընկայ դէպի Պոլիս։*

Օ, եթէ ես գուշակէի, թէ այլևս չը պիտի արժանանամ համբուրել վերադարձիս իմ հոգոյս հատոր մատաղ զաւակներիս, գուցէ, խոստովանում եմ, և չէի գնայ Պոլիս, որպէսզի, բացի ծնողական անքուժելի ցաւ ստանալուց, չը հալածւէի այնպէս, ինչպէս հալածեց ինձ հայ հասարակութիւնը իմ այնքան անխոնջ աշխատանաց համար...

* * *

Ինձ ճանապարհակցում էր բժիշկ Քուչարեանցը, որը արտասահման գնալով, ցանկացաւ անցնել Պոլսով,

ա) Կապել և որոշել սկզբնական գրաւոր պայմանները այն դերասանների և դերասանուհիների հետ, որոնց օգտաւէտ կը գտնէք հրաւիրելու Թիֆլիսի Հայ թատրոնի համար։

բ) Առաջարկել վարձ առաջնակարգ դերասաններին և դերասանուհիներին մինչև 100 րուբլի ամսական. իսկ երկրորդ դերերի կատարողներին մինչև 60 րուբլի։

գ) Առաջիններին առաջարկել ամեն մեկին երկու կէս բենեֆիս, իսկ երկրորդներին ամեն մէկին կէս բենեֆիս և դ) վարձման ժամանակամիջոցը պիտի համարւի ներկայ տարւայ սեպտեմբերի մէկից մինչև 1880 թւականի սեպտեմբերի մէկը։

Հաղորդելով Ձեզ Մասնաժողովի սոյն որոշումը ես քաջայոյս եմ, Մեծապատիւ Պարոն, որ դուք ոչինչ ջանք չէք խնայիլ արդարացնել Մասնաժողովի Ձեր վրայ ունեցած վստահութիւնը, հրաւիրելով այնպիսի տաղանդի տէր անձինք, որոնք սրտով նւիրւած լինելով գործին, մի գեղեցիկ հիմք դնեն ապագայ թատրոնական գործի շինութեան և բարեկաւութեան։

Ընդունեցէք, Պարոն, իմ յարգանաց հաւաստիքը։

Իշխան Ն. Ամատունի

18 Յունիսի 1879 թ.

*) *Մեծապատիւ պ. Գ. Զմշկեան*

Հայ թատրոնի Մասնաժողովը իր այս ամսւայ 14-ի նիստում իմ նախագահութեամբ յանձնեց ինձ առաջարկել Ձեզ ուղևորւել դէպի Կոստանդնուպոլիս հրաւիրելու մէկ քանի անձինք դերասանական խումբ կազմելու համար Թիֆլիսում, որպիսի նպատակի համար և Մասնաժողովը իրաւունք է տալիս Ձեզ գործել հետևեալ պայմաններով՝

գլխաւորապէս ինձ հետ ընկերակցելու նպատակով։

Երկաթուղի նստելով ես շատ լաւ էի տրամադրւած և միշտ ծիծաղում էի, սրախօսութիւններ անում, բայց միւս օրը, երբ մենք նստեցինք շոգենաւ, մի տեսակ մռայլ տխրութեան մէջ ընկայ, այնպէս որ Քուչարեանցը զարմացել էր իմ այդ տեսակ յանկարծ փոխւելուս վրայ։

Այդ օրը, ինչպէս յետոյ իմացայ, փոքրիկ տղայ զաւակս երեք օրւայ մէջ թաղելուց յետոյ, հողին յանձնելիս էին եղել և մեծ աղջիկ զաւակիս։

Այո, կայ ուրեմն մի չորրորդ չափումն ևս բնութեան խորհրդաւոր կանոնների մէջ։

Օդեսայից ես հեռագրեցի Ադամեանին, որ հանդիպէ ինձ Պոլսոյ նաւահանգստում օգոստոսի մէկին թէ երկուսին, լաւ չեմ յիշում։

Միևնոյն ժամանակ մենք տեղեկութիւններ հաւաքեցինք այդտեղ Պոլսի հիւրանոցների մասին և վճռեցինք իջնել «Վիկտորիա» անւանւած հիւրանոցում։

Պոլսում դերասանուհիներ ուռնելիս

Երեկոյ էր, որ մենք հասանք Բոսֆորի նեղուցը և այնտեղ գիշերեցինք։ Միւս օրը գեղեցիկ առաւօտ էր։ Ես զմայլեցի այդ նեղուցի տեսարանովը, թէև շատ անգամ կարդացել էի նրա շքեղ և բանաստեղծական դիրքի նկարագրութիւնը։

Երբ սկսեցինք մօտենալ նաւահանգստին, յանկարծ շրջապատեցին մեզ զանազան դիրքի և մեծութեան նաւակները, որոնցից մեր շոգենաւին մօտենալուն պէս դուրս էին թռչում զանազան հասակի և հագուստի մարդիկ և կատի պէս վեր մագլցելով շոգենաւի պատերով, ընկնում էին տախտակամածը, որը մի կտոր թուղթ ձեռին, որը զանազան իրեղէններ։ Սկզբում ես կարծեցի, որ դրանք մի տեսակ սրիկաներ են, որ պիտի կողոպտէին մեզ, բայց ինձ հասկացրին, որ դրանք կամ զանազան հիւրանոցների ծառայողներ են և ամեն մէկը հրաւիրում է ճանապարհորդներին իրենց հիւրանոցը, և կամ ժանրավաճառներ են և մտել են առաջեն ապրանքներ ծախելու։

Նաւահանգստում ես չը գտայ Ադամեանին, և մենք ստիպւեցանք հարց ու փորձ անելով հասնել «Վիկտորիա» հիւրանոցը Պերայի թաղում։

Ծովային ճանապարհորդութիւնը սաստիկ ազդեց ինձ, և ես հիւանդացայ, բայց չուզեցայ անկողին մտնել։

Եկաւ շուտով և Ադամեանը. մենք պատահեցինք կօրրիդորում և ճանաչեցինք միմեանց, որովհետև փոխադարձաբար ուղարկել էինք մեր լուսանկար պատկերները միմեանց։

Թէ ինձ, և թէ բժիշկ Քուչարեանցի վրայ Ադամեանի առաջին տեսութիւնը շատ լաւ ազդեցութիւն արաւ։

Սենեակը մտնելուն պէս նա այնպէս ընտելացաւ մեզ հետ, որ ինձ թւում էր, թէ ես վաղուց նրա հետ ծանօթ եմ։

Մի քառորդ ժամ նստելուց յետոյ Ադամեանն ինձ խնդրեց առանձնանալ և իսկոյն ուզեց մէկ հարիւր րուբլի ՚ի հաշիւ իր ապագայ վարձատրութեան։

Այդ դէպքը թէև փոքր ինչ խորթ թւաց, բայց ես չը կարողացայ մերժել և իսկոյն յանձնեցի իր ցանկացած հարիւր րուբլին և խնդրեցի միւս օրն իսկ առաջնորդել ինձ իր գտած դերասանուհիների մօտ։

Միւս օրը, արդարև, Ադամեանը եկաւ, և մենք, ուղեկցութեամբ բժիշկ Քուչարեանցի, այցելեցինք օր. օր. Աստղիկ և Սիրանոյշ դերասանուհի քոյրերին։

Որովհետև ես տկար էի և մեր հիւրանոցից մինչև դերասանուհիների տունը բաւական հեռու էր, ինչպէս ասաւ Ադամեանը, այդ պատճառով մենք կառք վարձեցինք, և կէս ժամ հաժարեա ճանապարհորդելուց յետոյ կանգ առանք մէկ Ջորաշէն փողոցի սկզբում, ուր անհնարին էր իջնել կառքով։

Այդտեղ մենք մտանք մի երկու յարկանի փայտաշէն տուն՝ և բարձրացանք վերի յարկը։

Փոքր ինչ սպասելուց յետոյ, մտան Աստղիկ և Սիրանոյշ քոյրերը, համարեա կիսամերկ։

Քուչարեանցը ու ես շւարած նայեցինք իրարու երեսի։ Քուչարեանցը ժպտաց ու առւսերէն ասաւ ինձ, որ երևի այստեղ այդպէս է ընդունւած։

Ինչ և իցէ, ես ուղղակի դիմեցի մեծ քրոջը՝ Աստղիկին, որն, ինչպէս երևում էր, միայն ունէր իրաւունք պայման կապելու։

— Յուսով եմ, օրիորդ,—սկսեցի ես,—որ դուք ծանօթ էք իմ առաջարկած պայմաններին, և մենք երկար ժամանակ չենք կորցնիլ նորից հարց բարձրացնելու։

— Այո,—պատասխանեց օրիորդը,—միայն թէ ձեր առաջարկած պայմանները շատ ծանր են, վարձատրութիւնը շատ քիչ։

Ես յայտնեցի, որ երկու քոյրերին միասին կարող եմ առաջարկել ամսական 180 րուբլի, բայց դրանից բարձր իրաւունք չունեմ, մանաւանդ որ թատրոնական մասնաժողովը միջոց չունի դրանից շատ վճարելու։

Երկար վիճաբանութիւնից յետոյ յայտնեցին, որ նրանք երկուսով 300 րուբլուց պակաս չեն կարող ընդունել, և մենք դուրս եկանք։

Տուն դառնալուց յետոյ, Ադամեանը հրապարակ հանեց մի ինչ որ հմուտ կօմիսիոներ, նախկին դերասան և անտրպրենեոր Պոլսոյ դերասանական խմբի, հետևապէս որը և լաւ ծանօթ է Պոլսոյ մէջ գտնւած բոլոր դերասանների և դերասանուհիների հետ, և որը մի «չնչին» վարձատրութիւնով կարող է ինձ համար թէ դերասանուհիներ ճարել և թէ բեմելուաւր ձեռք բերել։

Ներկայացաւ կարճահասակ ծաղկատար և արագաշարժ աչքերով մի մարդ, որի ազգանունն էր Մազաքեան, արհեստով լաւ կօշկակար, և դաւանութիւնով թուրդ «կաթոլիկ»։

— Յայտնի բան է, առաջին իսկ ծանօթութիւնից յետոյ այդ սիրելի պարոնը, ըստ պոլսեցոց սովորութեան, մէկ ոսկի ծախսի փող պահանջեց և այնուհետև խոստացաւ այնպէս անել, որ «իրենք աստղիկները ոտքիս գան»։

Այդ մարդու հետ ծանօթանալուց յետոյ ես ստիպւած հղայ, հաւատալով նրա և Ադամեանի անկեղծութեանը, մի տեսակ ոդիսէականութիւն անել Պոլսոյ մէջ, թափառելով մէկ թաղից միւս թաղը, դերասանուհիներ որոնելու։

Դէորգ Զմշկեան

(Կը շարունակւի)

ԹԵՐԹԻԿՆԵՐ ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

III

ԿԱՐԱՆՋԱԻԸ

Ես ֆրակ չունէի, ուստի հագայ իմ սև չերկէսկան, գնուցս քարշ տուի խենջարը ու ժամի 12½-ին թուրք կառապանը բերեց ինձ հին ամրոցի թաղը, օր. Վոյցէկովսկայի բնակարանը։

— Արտիստ Տէր-Գրիգորեան, մայրս,—ծանօթացնում էր օրիորդը.—հայր չունեմ, ահա նրա պատկերը՝ նա մի քաջ զինուոր էր, բայց չը հասաւ բարձր աստիճանների, որովհետև պրօտէկցիա չունէր...

Կէս ժամւայ ընթացքում օրիորդը մի վայրկեան անդամ չը լռեց։ Նա մի առարկայից յետոյ անցնում էր միւսին։

— Ասում են, օրիորդ, որ այստեղի հասարակական այգիի մօտ գեղեցիկ քարանձաւ կայ։

— Այո, այո, դուք չէք տեսել. գնանք միասին։ Դուք չէք արձակել ձեր կառքը։ Ի՞նչ հարկաւոր էր։ Ուրեմն նստեցէք ու գնանք։

Այդու մօտ ես արձակեցի կառքս։ Քարանձաւում մենք մնացինք երկու ժամ։ Նա մի րոպէ անդամ չէր լռում։

IV

ՆԵՐԿԱՑԱՑՄԱՆ ԳԻՇԵՐԸ

«Մեծն Ներսէսի» ներկայացումը շատ աջող անցաւ։ Հասարակութիւնը ոգևորւած ծափահարում էր։ Երբ ես հանեցի իմ երկար սպիտակ միրուքը, մեր սենեակը մտաւ օրիորդը։

— Շնորհաւորում եմ ձեր աջողութիւնը, պարոններ, դուք շատ լաւ ներկայացրիք, իսկ ձեր խաղը, վանօ, հիանալի էր, մանաւանդ այն տեսարանը, ուր դուք անիծում էք Պապ Թագաւորին։

— Վանօ,—կրկնեցին միանդամից Քալանթարն ու Եաղուբեան,—ուրեմն սա էլ ձեզ երևի կատիա է կանչում...

— Դժբախտաբար ոչ, չը նայելով իմ ցանկութեանը, նա ինձ անւանում է Եկատերինա Ստանիսլավովնա...

V

ԵՐԿՈՒՍՍ

Յուլիսի շոգ օրերից էր, ժամի 11-ը։ Ես իրերս բեռնում էի փոստային կառքը։ Ինձ մօտ էին Քալանթարն ու Գասպարը։ Նրանք ինձ պէտք է ճանապարհ դնէին։

— Ամբը դիժը չի անի, ինչ դու ես անում,— կուռւմ էր մօրաքոյրս,—այս շոգին մի քիչ ճանապարհ գնալ կը լինի. չէլը կարող կրեկոյեան սպասել։ Այ տղայ, այս ինչ արկղ է։ Ալէքսանդր, ինչ կայ այդ արկղի մէջ։

— Մի բացէք խնդրեմ, այնտեղ կանացի գլխարկ է և ամառւայ վերարկու, որ ընծայ եմ տանում մեր դերասանուհիներից մէկի համար։

— Աւելի լաւ չէը լինի՝ մօրդ համար մի բան տանէիը,—բարկացաւ մօրաքոյրս, բայց ջերմ համբուրեց ինձ հրաժեշտի ժամանակ...

Կառքը սլացաւ դէպի Շամախու ուղին։ Քալանթարն ու Եաղուբեանը ֆայտոնով հետևում էին...

Քաղաքից դուրս մի փոքր սեղան էր պատրաստւած, որի շուրջը պտտում էին Եաղուբեանի ծառան ու օրիորդը, մի փոքրիկ պայուսակ ուսից գցած։

— Գիտէի, որ պէտք է ճանապարհ դնէք, ես ևս եկայ...

— Հապա ձեր կառքը։

— Ես ձեր կառքով կը վերադառնամ. ինչի պահէի և աւելորդ վճարէի. ծառան կառապանի մօտ կը նստի։

Սահլւած էինք ռուսերէն խօսակցելու։ Կենացները, թէև կարճ, պտտւում էին «Մշակ»-ի և Արծրունու շուրջը։

Ես համբուրեցի և նստեցի կառքը։

— Վանօ, ինչպէս ձեզ նախանձում եմ, որ ճանապարհւում էք...

— Եկէք, օրիորդ, ձեզ քիչ սլացնեմ։

— Ինչո՞ւ, ահա մեր ֆայտոնը, ասացին երկու բարեկամները միասին։

— Ոչ, ոչ, ես փոստային կառքով եմ կամենում։

Օրիորդը նստեց ինձ մօտ և կառքը դանդաղ շարժւեց։ Օրիորդը դուրեկան կօնտրալտով սկսեց երգել ռուսերէն.

«Կը լծեմ ես սայլակումս
Արագաթռիչ ձիերիս,
Կը սլանամ և կը հասնեմ
Գեղատեսիլ սիրահարիս։
Դէհ, իմ անգին ձիերս,
Սփոփեցէք սրտիս ցաւերը,
Մի կորցնէք ուրախ ժամեր,
Որ չը զղջաք ամբողջ դարեր...

— Սուր,—պատւիրեցի ես թուրք կառապանին։

— Ցտեսութիւն, պարոններ,—ասացի ես։

— Մնաք բարով, սիրելիներս,—ասաց օրիորդը։

Կառքը սլացաւ և մինչև նրա անհետանալը երկու սիրահարները օդում խաղացնում էին իրանց սպիտակ թաշկինակները։

Թուրք կառապանը հրգում էր իր կոկորդային ձայնով.

Բու դարդ մանի օղլըրիր
Եա բու գիւնդը, եա սաբաղ։

(Այս դարդը ինձ կըսպանի այսօր կամ թէ վաղը)։

Երևի նա յիշեց իր սևաչեայ Ֆաթմային...

Երկու օրից յետոյ օրիորդը ու ես տւինք Քալանթարին հետևեալ հեռագիրը.

Բագու Ալէքսանդր Քալանթարին

Աջողութեամբ հասանք Ղուբա. ես իջայ ընկերոջս՝ Նիկողայոսի մօտ, իսկ օրիորդը իր հղբօր մօտ։ Երեք շաբաթից յետոյ ես կուղևորւեմ Թիֆլիս, իսկ օրիորդը Բագու։ Հաղորդեցէք Գասպարին և օրիորդի մօրը։

Ե. Տէր-Գրիգորեան
(Վանօ)

ՊՈՒՐՃՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԴԱՐՆԵՐ

Գէորգ Բարխուդարեան.
Գէորգ Բարխուդարեան, ուսուցիչ
Գէորգ Բարխուդարեան, Շուշում.
Գէորգ Բարխուդարեան, շրջապատած իւրայիններով.
Գէորգ Բարխուդարեան, ծնողները, քոյրերը և եղբայրը։
Գէորգ Բարխուդարեան և Սահակեանցոց Պալասանեան, քոյրեր, եղբայր, հայր, նրանց պատկերները։
Գայիանէ Աբշակունի-Բուդաղեան.
Գէորգ Բարխուդարեան և Կատարինէ Հայրումեան.
Գէորգ Բարխուդարեան և իր քրոջ թոռները։
Գէորգ Բարխուդարեան, մահուան տագնապում։
Գէորգ Բարխուդարեան, վերջին լուսանկար։
Գէորգ Բարխուդարեան, նախավերջին լուսանկար։
Պատմութիւնը միշտ կրկնւում է։
Վերդի։
Զայկովսկի։
Ռօմէօ և Ջուլիէտ։

Fac-similée

Գէորգ Բարխուդարեանի ինքնաձեռագիր նամակն ու ծրարը։

ՆԻՒԹ

Գէորգ Բարխուդարեան . . . Տ.
Գէորգ Բարխուդարեանի վերջին օրերը . . . . . Բժշկ. Բ. Նալաւարեան
Գէորգ Բարխուդարեանի յուշարկ. Թամբանական † Ալ. Քալանթար
Գէորգ Բարխուդարեանի անմոռաց յիշատակին . . . Ս. Մանդինեան
Գէորգ Բարխուդարեանի թարգմ. մի կատոր . . . . . Sçhillers

ԳԻՏԱԿԱՆ

Շեւցարիայի ազատ. օրօրոցը, Ի Շեւց. ներքին կուսակց. և ինքնավար. ձեւը . . Պրօֆ. Ս. Նիզամարեան
Բարեփառ հայրերի չարախոս որդիներ . Ա. Մ. Նզեկեան

ԳՐՉԻ ՓՇՐԱՆՔՆԵՐԻՑ

Դրօշակակիրը . . . . . Լէօնիդ
* * * (բանաստեղծու-թիւն) . . . Յ. Լուսկարեանց

ՄԱՀԳՈՅԺ

Անտօն Փուրցելաձէ.
Գրիգոր Շահրուզպեան.
Հ. Ֆ. Բ. Լինչ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Աւերակների և գերեզմանների ՝ր-կրպագուներ։ Խաչիկեան Լուսիա-հան։ Կրոկոդիլոսիան հայ արտասուքի հեղեղները և Սպանդար Սպանդարեան։ Մի-թէ նա է հայը որ ուտում է տօլմա։ Ալ. Հալանթարի անուան տուն։ Համազգային Մեծ Յոբելեանը։ Վանի Երամեան դպրոցը և նրա հիմնադիրը։

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպերա, Ռուսաց դրամա, Հայոց Թատրոն, Կարա-Թիւրիւքի Թարգմ. Յոբելեար Նալջաֆ-բէկ Վեկիլով։ Իմ Թատրոնական յիշողութիւններից . . . Գէորգ Ջմշկեան

Թևերթիկներ իմ յիշողութիւնից . . . . . Վանօ

ՆՈՐԱԳՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

Գրախօսականներ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶԴ

ՀԱՅՈՒՀԻ ՄԸ որ կը բնակի Կալիցիայի մէջ, դուստր երջանկայիշատակ ՏԻՏՈՍԻ ՊՈՒՏՏՆՈՎԻՉ (Ածատուրեան) կալւածատիրոջ, կը գտնւի այժմ մեծ կարօտութեան մը մէջ, վասն զի նոյնին կալւածներն և բոլոր ստացւածներն աճուրդի կը հանւին։ Նոյներն չը կրնանցնելու համար առնւազն գոնէ 30,000 ռուսրիական գումարի կարօտ է, զորս Գալիցիայի մէջ ձեռք անցնել անկարող է, վերջերս մէջ տեղ ելլող պատերազմի անհանդարտութեանց և առհասարակ ընդհանուր վարկին անկման պատճառով։ Ասոր համար կը խնդրէ իւր՝ Կալիցիայէ դուրս բնակող սիրելի Ազգայիններէն, որ հաճին ի սէր Աստուծոյ, զրամական նպաստիւք օգնութեան հասնել և սպառնացող մեծ կործանումէն զինքն ազատել։

Հասցէն՝ Helena z Bogdanowiczao Trybalscka. Anstrya (Galicye ul Drieduszyckich l. 22. Kołomyja

ՅՈՎՀ. ԱՍԼԱՆԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Լոյս ետ տեսել

1. Ինքնուրոյն
ԿԵԱՆՔԻ ՄԷՋ
Վէպիկ
(Պատկերներ իրական կեանքից)
ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

2. Թարգմանական
Ն. Ա. ՐՕԺԿՈՎ
ՓՈՂՈՎՐԴԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՈՒԹԵԱՆ
ՁԵՒԵՐԻ ՄԷՋԻՆ
ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Վաճառւում են «ԳՈՒՏՏՆԵՆԲԵՐԳ» և «ԳԻՐ» գրավաճառանոցներում։

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԿԵԱՆ
(Вельяминов. 8)
Աչքի հիւանդ. մասնագէտ
Ընդունելութիւն՝ առ. 10—1 ժ. երեկ. 5—7 ժ.

ԼՈՅՍ
Լուսանկարչական արուեստանոց
ԳՐԻԳՈՐ ԲԱԲԱԼԵԱՆԻ
(Михайлов. пр., 22)
Կատարում է թուանկարչութեան վերաբերեալ ամենայարդի գործեր։

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

Հանդիսաւոր հերթական jour fixe-ը ուրբաթ, Նոյեմբերի 29-ին նախատեսած է բանաստեղծ, ուսուցիչ և թարգմանիչ ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ յիշատակին, Առանձին հրաւէր ոչոքի չէ ուղարկուած։ Սկիզբը երեկ. 8½ ժամին։

НИВА еженедѣльный иллюстрированный журналъ. ОТКРЫТА ПОДПИСКА НА 1914 Г.
ПОДПИСЧИКИ ПОЛУЧАТЪ:
52 №№ журнала: романы, повѣсти, разск., картины, рис. въ краскахъ, иллюстраціи соврем. событій.
52 КНИГИ, отпечатан. четкимъ шрифтомъ, въ которыя войдетъ:
40 книгъ „СБОРНИКА НИВЫ“, содержащихъ:
ПОЛНОЕ СОБРАНІЕ СОЧИНЕНІЙ въ 27 книгахъ В. Г. КОРОЛЕНКО.
ПОЛНОЕ СОБРАНІЕ СОЧИНЕНІЙ въ 8 книгахъ А. Н. МАЙКОВА.
ПОЛНОЕ СОБРАНІЕ СОЧИНЕНІЙ въ 5 книгахъ Эдм. РОСТАНА.
12 КНИГЪ ЕЖЕМѢСЯЧНАГО ЖУРНАЛА „ЛИТЕРАТУРНЫЯ и ПОПУЛЯРНО-НАУЧНЫЯ ПРИЛОЖЕНІЯ“.
12 №№ „Ежемѣсячныхъ новѣйшихъ модъ“. 12 листовъ выкроекъ и рисунк. рукодѣльн. работъ.
1 „ОТРЫВНОЙ ЕЖЕМѢСЯЧНЫЙ КАЛЕНДАРЬ“ на 1914 г.
ПОДПИСНАЯ ЦѢНА „НИВЫ“ со всѣми приложеніями на годъ: безъ доставки: въ СПБ.—6 р. 50 к., въ Москвѣ, у Печковской, 7 р. 25 к., въ Одессѣ, „Образованіе“, 7 р. 50 к.; съ дост. въ СПБ.—7 р. 50 к., съ пересылкою—во всѣ мѣста Россіи—8 р. За границу—12 р.
Разсрочка платежа въ 2, 3 и 4 срока.
Иллюстрирован. объявл. о подпискѣ высылается безплатно.
Адресъ: С.-Петербургъ, въ Контору журнала „НИВА“, улица Гоголя, № 22.
(3—1)

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. ՍԷՐ ԿԱՄ ՄԱՀ, ողբերգ. 5 գործող. սպառած . . . .
2. ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԴԻԿ (երգիծ. բանաստ.) . . . . . » 60
3. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ . . 1 »
4. ՎԻԼՀԵԼՄ ՏԷԼԼ (դրամա 5 գործ. Շիլէբի) . . . . . 1 »
5. ԴՕՆ ԿԱՐԼՈՍ (դրամ. բանաստ. 5 գործ Շիլէբի) . . . . . 1 »
6. ՕՐԼԷԱՆԻ ԿՈՅՍԸ (Վիպաստ. բանաստ. 5 գործ. Շիլէբի) . » 60
7. ՆԱԹԱՆ ԻՄԱՍՏՈՒՆ (դրամ. բանաստ. Լէսսինգ) . . . . »
8. ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ (դր. 5 գործ. Շէքսպիրի . . . . .
9. Ֆիէսկօի դաւադրութիւնը Ջենուայում (Ողբերգ. 5 գործ. Շիլէբի) . . . . . »
10. ՋԱՆԴԱԳԻ ԵՐԳԸ (Բանաստ. Շիլէբի) . . . . . »
11. ՄԱՐԻԱ ՍՏՒԱՐՏ (Ողբերգ. 5 գործ. Շիլէբի) . . . . . »
12. ՖԱՒՈՒՍՏ (Ողբերգ. Գէօթէի) 2

Գիմել ժառանգներին հետեւեալ հասցէով՝

Գ-ջէ Գաիանէ Бугданян. Тифлисъ, Елизаветинская, 40.

(0—3)

ՊԱՐԻԶԻՄ ՄԵԾ ՊԱՀԵՍՏ ԱՄԵՆԱ-ԸՆՏԻՐ ԲԼԻՒԶՆԵՐԻ
LINGERIE FINE, TROUSSEAUX,
BLOUSES. JUPONS et ROBES BRODEES
Le Trousseau Royal
116 Rue La Boëtie, 116. PARIS (8-e)
(Champs-Elysées)
(25—23)